


ԲԱԺԻՆ Ե



ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ
1946 - 1965.

7. 1911

ROBINSON & COMPANY

(1891-1901)

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Սփյուռքահայ դաղթօջախների աշխարհագրական տեղաբաշխումը, ինչպես նաև նրանց ազգաբնակչության թիվը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մեծ փոփոխություններ չի կրել:

Հայերի մեծ զանգվածներ ապրում են Ամերիկայի, Ասիայի, Եվրոպայի, Հյուսիսային Աֆրիկայի տարբեր երկրներում: Թեև սփյուռքահայության թվի մասին ճշգրիտ վիճակագրական տվյալներ չկան, այնուամենայնիվ, հենվելով զանազան աղբյուրների վրա, կարելի է որոշել, որ այն հասնում է մոտ 2 միլիոնի:

Արտասահմանյան հայության սոցիալ-տնտեսական վիճակը հիմնական գծերով համընկնում է նրանց բնակված երկրների ժողովուրդների սոցիալ-տնտեսական վիճակին: Սակայն մի շարք երկրներում հայության վիճակն ավելի ծանր է՝ այնտեղ կիրառվող ազգային խտրականության հետևանքով: Միևնույն ժամանակ սփյուռքահայ դաղթօջախների ազգաբնակչությունն ունի իր ազգային-մշակութային դիմագիծը, որը տարբեր երկրներում արտահայտվում է տարբեր չափով: ԱՄՆ-ում ապրում են 300—400 հազար հայ: Ամերիկահայերի մեջ մեծ թիվ են կազմում բանվորները, պետական և առևտրական գրասենյակների ծառայողները, առողջապահության, արվեստի, գիտության բնագավառների աշխատողները, առևտրականները: Կան նաև խոշոր ձեռնարկատերեր: Սփյուռքահայության այս զանգվածը շունչի իր ազգային դարոցները: Ձուլման վտանգը ամենից ավելի սպառնում է ԱՄՆ-ի հայ դաղթօջախին:

Հարավային Ամերիկայի երկրների (Արգենտինա, Ուրուգվայ, Բրազիլիա, Վենեսուելա և այլն) հայ ազգաբնակչության թիվը մոտավոր տվյալներով կազմում է 115 հազար: Նրանց հիմնական մասը բանվորներ և արհեստավորներ են: Կան պետական և առևտրական հիմնարկությունների ծառայողներ, ինչպես նաև արդյունաբերական ձեռնարկությունների ու առևտրական ընկերությունների տերեր:

Եվրոպայում բնակվող հայության ամենախոշոր մասն ապրում է Ֆրանսիայում՝ շուրջ 200 հազար մարդ: Ֆրանսահայության հիմնական զբաղմունքը արհեստագործությունն է: Մեծ թիվ են կազմում գործարանային բանվորները, ինչպես նաև մտավորականությունը՝ առողջապահության, արվեստի ու դրականության գործիչները, պետական հիմնարկությունների ծառայողները: Եվ-

րոպայի մյուս երկրներում (Անգլիա, Ավստրիա, Իտալիա, Հունաստան, Բելգիա, Բուլղարիա, Ռումինիա և այլն) բնակվում են մոտ 60 հազար հայ, որոնց մեջ գերիշխում են բանվորներն ու արհեստավորները: Այստեղ ևս կան մեծ թվով մտավորականներ, պետական և առևտրական հիմնարկությունների աշխատողներ, վաճառատների ու արդյունաբերական ձեռնարկությունների սեփականատերեր:

Ավելի քան 850 հազար հայ բնակվում են Ասիայի ղանազան երկրներում, հիմնականում Իրանում, Թուրքիայում, Լիբանանում, Սիրիայում և այլուր:

Իրանում, Սիրիայում, Իրաքում և Թուրքիայում բնակվող հայերի մի զգալի մասի զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Այդ երկրների քաղաքային հայ բնակչությունն զբաղվում է արհեստագործությամբ և բանվորությամբ, ծառայում է պետական, առևտրական, առողջապահական, լուսավորական հիմնարկություններում: Մեծ թիվ են կազմում մտավորականները: Կան խոշոր ձեռնարկատերեր, առևտրականներ, հողատերեր:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սփյուռքահայության համար առաջնակարգ նշանակություն ստացավ Լիբանանի հայ գաղութը, շուրջ 180 հազար ազգաբնակչությամբ: Լիբանանահայերի մեջ կան բանվորներ, արհեստավորներ, վաճառականներ, պետական պաշտոնյաներ, խոշոր ձեռնարկատերեր, մտավորականության մի ստվար ղանգված՝ լուսավորության, առողջապահության, արվեստի և գրականության, մշակույթի մյուս բնագավառների գործիչներ, փոքրաթիվ գյուղացիներ: Սփյուռքահայ մյուս գաղթօջախների համար Լիբանանը դարձել է մտավորական կուրեր պատրաստող կենտրոն:

Հյուսիսային Աֆրիկայի երկրների (Եգիպտոս, Եթովպիա, Սուդան) մոտ 25 հազար հայերի հիմնական զբաղմունքը արհեստագործությունը և բանվորությունն է: Զգալի թիվ են կազմում առևտրական ու պետական գրասենյակների ծառայողները, մտավորականները: Կան նաև արդյունաբերական ձեռնարկությունների և վաճառատների տերեր:

Հայ ժողովրդի սփյուռքահայ հատվածը վարում է ակտիվ քաղաքական-հասարակական կյանք: Նա ունի իր քաղաքական կուսակցությունները, հասարակական, մշակութային, մարզական կազմակերպությունները: Հրատարակվում են բազմաթիվ թերթեր, հանդեսներ, գեղարվեստական և այլ գրականություն: Հայ պարբերականներ և գրքեր լույս են տեսնում նաև օտար լեզուներով: Սփյուռքում հայերեն և օտար լեզուներով հրատարակվում են ավելի քան 130 անուն հայկական թերթեր, ամսագրեր, հանդեսներ և ուրիշ պարբերականներ:

Արտասահմանի հայ աշխատավորը, մի կողմից, հանդես է գալիս տվյալ երկրի աշխատավորների քաղաքական պայքարում, իր հույզերով ու ձգտումներով կապվելով առաջադիմական ուժերի հետ, մյուս կողմից, որպես հայ, պատմական դառը ճակատագրի բերումով հայրենիքից հեռացած քաղաքացի, ուշադրությամբ ու համակրությամբ հետևում է Սովետական Հայաստանում կատարվող իրադարձություններին:

Միջազգային զարգացման արդի փուլում արտասահմանի հայկական քաղաքական կազմակերպությունները և նրանց հարող ուժերը բաժանված են երկու իրարամերժ ճակատների:

Սփյուռքահայության մեջ գործում են հնչակյանների, ռամկավարների և դաշնակցականների կուսակցությունները: Բավական թիվ են կազմում արտասահմանյան կոմունիստական և բանվորական կուսակցությունների հայ անդամները: Բացի այդ կուսակցություններից, գործում են մեծ թվով հայրենակցական, մշակութային, կրթական, բարեգործական, մարզական և երիտասարդական միություններ ու ընկերություններ: Այդ ընկերությունները և միությունները մեծ մասամբ գտնվում են վերոհիշյալ այս կամ այն կուսակցության ազդեցության տակ: Սփյուռքահայ կյանքում զգալի ազդեցություն ունի նաև եկեղեցին:

Հայ բարեգործական ընդհանուր միությունը տարբեր երկրներում մշակութային, կրթական, մարզական և այլ բնագավառներում ազգօգուտ գործ կատարեց: «Տարիներու տեղութեամբ,—գրում է առաջադիմական «Լրաբեր» թերթը,—բարեգործականը հայ գաղթաշխարհի մեջ նպաստահավաք և նպաստաբաշխ գլխավոր կազմակերպությունը հանդիսացավ և նկատելի, օգտակար և նույնիսկ անհրաժեշտ բաժին ունեցավ թե պատուհասյալ և կարոտ հայերու նյութական օժանդակություն տալուն մեջ, և թե ազգապահպանման կենսական հարցի կապակցությամբ»¹:

Սփյուռքահայ գաղթօջախների մշակութային և այլ կազմակերպություններին բարեգործական զգալի օժանդակություն է ցույց տալիս «Գալուստ Կյուլպենկյան ֆոնդ» հաստատությունը:

Սփյուռքահայ գաղթօջախներում գոյություն ունեն հարյուրից ավելի հայրենակցական միություններ, որոնք իրենց գործունեությամբ նման են մշակութային և բարեգործական ընկերություններին: Այդ միություններն ունեն դրամական միջոցներ, որոնք գումարվում են անդամավճարներից, հանգսնակություններից, նվիրատվություններից և այլ աղբյուրներից:

Ինչ վերաբերում է սփյուռքահայ ռամկավար և հնչակյան կուսակցություններին, ապա պետք է նշել, որ նրանք առաջադիմության և խաղաղության լազերում են: Այդ կուսակցությունները պրոպագանդում են Սովետական Միության, մասնավորապես Սովետական Հայաստանի հաջողությունները, մերկացնում դաշնակցականների դրպարտությունները:

Դաշնակցությունը եղել և մնում է սովետական իշխանության թշնամին: Նա ծառայում է հակադեմոկրատական, իմպերիալիստական ուժերին և նրանից միջոցներ է ստանում իր հակասովետական քայքայիչ գործունեությունը շարունակելու համար:

Սփյուռքահայ կոմունիստները, գործելով տարբեր երկրների կոմունիստական կուսակցությունների շարքերում, ակտիվ կերպով մասնակցում են այդ երկրների հայ գաղթօջախների առաջադիմական ուժերի պայքարին:

Երկրորդ համաշխարհային պատերազմում Սովետական Միության ձևորված պատմական հաղթանակը հանդիսացավ սփյուռքահայության կյանքի աննախադեպ աշխուժացման վճռական ազդակներից մեկը: Ստեղծվեցին հայրենասիրական մի շարք կազմակերպություններ և միություններ, որոնք կանգնեցին խաղաղության և դեմոկրատիայի համար պայքարող ուժերի կողմում:

¹ «Լրաբեր», 1956, 1 մարտի:

Այդ կազմակերպությունների հիմնական նպատակն էր Սովետական Հայաստանի պաշտպանությունը և նրա հաջողությունների պրոպագանդումը, կապերի ամրապնդումը հայրենիքի հետ, պայքարը հանուն դեմոկրատիայի, աջակցությունը ազգային-ազատագրական պայքարին, հայապահպանության գործը և այլն:

Ինչպես հայտնի է, 1944 թվականին ստեղծվել էր Ամերիկահայ ազգային խորհուրդը: 1945 թվականի ամռանը Լիբանանի և Սիրիայի հայ դեմոկրատական կազմակերպությունները հիմնեցին «Սուրիո և Լիբանանի հայ ազգային խորհուրդ»-ը: 1947 թվականին այդ խորհուրդն ստեղծեց Սիրիայի և Լիբանանի հայերի դեմոկրատական ճակատ, որի մեջ մտան հայ կոմունիստները, հնչակյանները, ռամկավարները, անկուսակցական հայրենասերներ: Համամանան կազմակերպություններ ստեղծվեցին համարյա բոլոր գաղթօջախներում:

Սիրիայի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Խալեկ Բադդաշը Մերձավոր Արևելքում ստեղծված հայկական առաջադիմական ուժերի միասնական ճակատի մասին գրել է. «Շայնքում մեջ կազմված է ազգային ճակատ մը, որուն առաջադրանքն է արաբ և հայ ժողովուրդներուն բարեկամությունը, պայքար դաշնակ ավազակախմբերի դեմ և պաշտպանություն հայերու մայր հայրենիքի՝ Հայաստանի: Այս ճակատը իր մեջ կհամախմբի բոլոր հայ կուսակցություններն ու կազմակերպությունները, որոնց գլխավորներն են՝ հնչակյանները, ռամկավարները, վերածնունդ միությունը և հայ կոմունիստները: Դաշնակներն այսօր հայ ժողովրդի ծոցից դուրս շարտված, մեկուսացված ավազակախումբ մըն են»¹:

Ազգային խորհուրդների ստեղծման առաջին իսկ օրից դաշնակցությունը պայքար սկսեց նրանց դեմ: Ստանալով միջազգային իմպերիալիզմի աջակցությունը, դաշնակցությունը զանազան միջոցներով ցանկանում էր պառակտել ազգային ճակատը, իր ձեռքը վերցնել սփյուռքահայ գաղթօջախների դեկավարությունը: Հաշվի առնելով, որ հայ կոմունիստների, հնչակյանների և ռամկավարների միջև, չնայած նրանց՝ միևնույն ճակատում գտնվելուն, գոյություն ունեն գաղափարական և այլ բնույթի տարաձայնություններ, դաշնակցության լիդերները ճգնում են օգտագործել այդ տարաձայնությունները՝ նրանց պառակտելու համար: Երբեմն դաշնակցությունը հանդես է գալիս միասնական ճակատ ստեղծելու առաջարկով: Դա արվում է սփյուռքահայ աշխատավորական մասսաներին մոլորեցնելու և նրանց համակրությունը շահելու նպատակով:

Խոսելով այն մասին, թե ինչու հնչակյանները և ռամկավարները չեն կարող դաշնակցության հետ մեկ միասնական ճակատում լինել, հնչակյանների օրգան «Արարատ» թերթը գրում է. «Սփյուռքահայության միասնական ճակատի արգելքը կուգա դաշնակցության կողմն, որ ամեն ճիգ կթափե, որ հնչակյանը և ռամկավարը բաժնե իրարմ և հեռացնե այդ երկուքը Սովետական Հայաստանն: Դաշնակցությունն ալ միասնականությունն, միացյալ ճակատ կուղև՝ բայց... Հայաստանի դեմ»²: Իսկ ով դեմ է Սովետական Հայաստանին,

¹ «Ժողովրդի ձայն», 1947, 12 հունիսի:

² «Արարատ», 1955, 1 հուլիսի:

նա չի կարող լինել ազգային ճակատում, եզրակացնում է թերթը: Հնչակյան կուսակցության նման դիրքորոշումը լիովին պաշտպանում են ռամկավարները:

Տվյալ հարցում սկզբունքային դիրք է գրավել նաև Ամերիկահայ առաջադիմական միությունը: Դաշնակցության հետ իբրև կազմակերպություն գործակցելը, գրում են առաջադիմականները, բոլորովին անընդունելի առաջարկ է: Մենք մեր ժողովրդին և մեր հայրենիքին դավաճանած կլինենք, եթե համաձայնվենք աշխատակցել Վրացյանի և Դարբինյանի հետ¹:

Դաշնակցությունը պայքարում է առաջադիմական ուժերի դեմ, ի նպաստ միջազգային իմպերիալիզմի, առանց այլևայլության հայտարարում է, թե պայքարել դաշնակցության դեմ՝ նշանակում է հանդես գալ միջազգային իմպերիալիզմի դեմ: Դաշնակցության «Հայրենիք» թերթը իր խմբագրականում գրել է. «Դաշնակցության դեմ ճակատ հայտարարել, օրվան աչն ժամուն, երբ ամենի մրցակցություն մըն է, որ կը տարվի Արևմուտքի և Արևելքի միջև, ուրիշ բան չի նշանակի, եթե ոչ ճակատ հայտարարել Արևմտյան ազատ ժողովրդավարության դեմ»²:

Սակայն ոչ դաշնակցության սպառնալիքները, ոչ էլ իմպերիալիստական պետությունների հալածանքները չսասանեցին սփյուռքահայ առաջադիմական ուժերի միասնությունը, որ ոչ միայն չի պառակտվում, այլ ընդհակառակը, ավելի ու ավելի է ամրապնդվում:

Հայ դեմոկրատական ճակատի ձևավորմանը մեծապես նպաստեց ետպատերազմյան քաղաքական կացությունը, մասնավորապես ֆաշիզմի դեմ Սովետական Միության նվաճած համաշխարհային-պատմական հաղթանակը: Սփյուռքում ավելի բարձրացավ Սովետական Հայաստանի հեղինակությունը: Սփյուռքահայ զանգվածների համար հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, դարձավ ազգապահպանության հիմնական կովանը:

Սփյուռքահայության համար վճռական նշանակություն ունեցավ 1945 թվականի նոյեմբերին սովետական կառավարության ընդունած որոշումը՝ հայրենադարձություն սկսելու վերաբերյալ: Բոլոր գաղթօջախներում կազմակերպվեցին հայրենադարձությանը նպաստող կոմիտեներ, որոնց մեջ մտնում էին սփյուռքահայության քաղաքական, ազգային, կրոնական բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները, բացառությամբ դաշնակցականների:

Դաշնակցությունն այդ օրերին խոր ճգնաժամ էր ապրում: Նրա հարյուրավոր շարքային անդամներ հրապարակորեն հրաժարվեցին կուսակցությունից և վերադարձան Սովետական Հայաստան: Սփյուռքահայության քաղաքական կյանքի արագ վերելքին դեմ գնալը կնշանակեր դաշնակցության վերջնական կործանում, ուստի նրա պարագլուխները դիմեցին ժամանակավոր տակտիկական խաղի: Ձևականորեն լույս չի դրել բռնելով հայրենադարձության նկատմամբ, նրանք գործնականում ձգտում էին բոլոր միջոցներով ձախողել այն:

¹ Տե՛ս «Լրաբեր», 1960, 10 փետրվարի:

² «Հայրենիք», 1960, 10 փետրվարի:

Սփյուռքահայությունը հայ ժողովրդի անբաժանելի մասն է: Նրա ապագան և իղձերը կապված են Սովետական Հայաստանի հետ, որը դեպի իրեն է ձգում զաղութահայ աշխատավորներին:

Սփյուռքահայությունը Սովետական Հայաստանի յուրաքանչյուր նվաճում իրավամբ համարում է իրենը, ոգեշնչվում է նրանով, իր բախտը անխզելիորեն և վերջնականապես կապելով Սովետական Հայաստանի հետ: «Հայաստանեն հաղորդված հառաջադիմության ու վերելքի ամենափոքր լուրն անզամ հուզումով կաշկածն մեր հայրենակարոտ սրտերը»,¹—գրում են ռամկավարները:

Առանց Սովետական Հայաստանի, առանց մայր հայրենիքի, սփյուռքահայությունը դատապարտված է դանդաղ և անխուսափելի կործանման: Սփյուռքահայության փրկությունը ներգաղթն է, աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի վերամիավորումը Սովետական Հայաստանում:



Ետպատերազմյան շրջանում կապիտալիստական երկրներում ուժեղացավ ռեակցիայի հարձակումը: Այս երևույթը ազդեց նաև սփյուռքահայության քաղաքական կյանքի վրա: 1948 թվականին կրթանանում օրենքից դուրս հայտարարվեց կոմունիստական կուսակցությունը, իսկ 1949—1954 թվականներին Սիրիայում ուժեղ հալածանքներ սկսվեցին դեմոկրատական կազմակերպությունների դեմ: Կոմունիստական կուսակցությունն ընդհատակ անցավ, փակվեցին նրա լեզալ օրգանները: Դադարեցին գործելուց կրթանանի ու Սիրիայի հայ առաջադիմական մամուլի օրգանները: Զգալի հարվածներ ստացան նաև Ֆրանսիայի հայ առաջադիմական կազմակերպությունները, որոնց ստագիր օրգանները նույնպես մի քանի անգամ փակվեցին: Նույնպիսի վիճակում էին Լատինական Ամերիկայի, մասնավորապես Արգենտինայի հայ դպրոցախները:

Դեմոկրատիայի դեմ ռեակցիայի հարձակումը հալածանքներ առաջ բերեց նաև ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Այդ երևույթը հաստատող ցայտուն օրինակ է տալիս Թուրքիան, որը գործում էր Ամերիկայի ռեակցիոն ուժերի Թեղադրանքով: 1955 թվականի սեպտեմբերին նացիոնալիստական տարրերը Ստամբուլում արյան բաղնիք սարքեցին հույների, հրեաների և հայերի համար: Հայկական վարժարաններում, օրինակ, մայրենի լեզու հայտարարվեց թուրքերենը: 1958 թվականին մի շարք աջ, նացիոնալիստական թերթեր կամպանիա սկսեցին ազգային փոքրամասնությունների դեմ, պահանջելով արգելել հունարենի, հայերենի և ուրիշ ազգային փոքրամասնությունների լեզուների օգտագործումը հասարակական վայրերում: Իսկ Սիրիայում 1963 թվականից արգելվեց հայատառ օրգանների հրատարակությունը:

Հետադիմության լայն ճակատով հարձակումը աշխուժացրեց դաշնակցա-

¹ «Զարթոնք», 1958, 27 դեկտեմբերի:

կանների գործունեությունը: Նրանք ծառայագրվեցին ամերիկյան իմպերիալիզմին, վերջինից ստանալով ամեն տեսակի օգնություն իրենց հակասովետական գործունեության համար: Դաշնակցությունը ԱՄՆ-ում սկսեց սխառմատիկ մասնակցել այսպես կոչված «գերյալ աղգերի շաբաթ» պրովոկացիոն միջոցառումներին, հետախուզությանը մատնել առաջադիմական գործիչներին: Արարական Արևելքի երկրներում նա ամենագործուն մասնակցություն ունեցավ դեմոկրատական շարժումների և ազգային-ազատագրական պայքարի ճնշմանը:

1950-ական թվականների կեսերից ավելի աշխուժացան կապերը հայրենիքի և սփյուռքի միջև: Սկսեցին Սովետական Հայաստան այցելել բազմաթիվ սփյուռքահայեր, որոնք ծանոթանում էին հայ ժողովրդի հաջողություններին և վերադառնալով՝ պատմում էին դրանց մասին:

Հայրենիքի և սփյուռքի կապերի ամրապնդումը, բազմաթիվ փոխայցելությունները, գեղարվեստական և մարզական խմբերի, գրողների, արվեստագետների, գիտնականների փոխայցելությունները նոր ավլուն առաջացրին սփյուռքահայության քաղաքական կյանքում, նպաստեցին նրա նոր վերելքին ու համախմբմանը հայրենիքի շուրջը: Հատկանշական է, որ այս շրջանում սփյուռքահայության քաղաքական մտքի փաստական կենտրոնը աշխարհագրական իմաստով նույնպես մոտեցավ մայր հայրենիքին: Եթե երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում այդպիսի կենտրոն կարելի էր համարել Ֆրանսիան, ապա երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, մանավանդ 50-ական թվականներին, որոշակի նպաստավոր պայմանների բերումով, նման կենտրոն դարձավ Բեյրութը (Լիբանան): Այստեղ, ինչպես նաև մյուս գաղթօջախներում, Սովետական Հայաստանից ստացվում են մեծ քանակությամբ գրքեր, պարբերականներ, կինոֆիլմեր:

Այդ ամենը կարևոր նշանակություն ունեցավ նաև սփյուռքահայության հայրենասիրական ուժերի համախմբման գործում: Ուժեղացավ փոխադարձ վստահությունը նրանց միջև, որը հիմք ծառայեց միասնական պլատֆորմ ստեղծելու և համատեղ հանդես գալու այնպիսի կարևորագույն հարցում, ինչպիսին է խաղաղության պաշտպանությունը ամբողջ աշխարհում: Սփյուռքահայության հայրենասիրական, դեմոկրատական ուժերի ճակատի ամրապնդման գործում կարևոր նշանակություն ունեցան 1961 թվականին կայացած Հայաստանի կոմունիստական կուսակցության XXII համագումարի որոշումները: Համագումարը, գնահատելով ժամանակակից փուլում սփյուռքահայ դեմոկրատական ուժերի հայրենասիրական գործունեությունը և, մասնավորապես, խոսելով հնչական ու ռամկավար կուսակցությունների գործունեության մասին, արձանագրեց. «Ներկայումս... հնչական կուսակցությունը վարում է Սովետական Հայաստանին աջակցելու գիծ, պրոպագանդում է մեր հանրապետության նվաճումները, պայքար է մղում դաշնակ թափփուկների դեմ, հանդես է գալիս իմպերիալիզմի դեմ, հանուն խաղաղության: Մոտավորապես նույնպիսի դիրքերում է կանգնած ռազմակավարների կուսակցությունը:

Այդ կուսակցությունների նկատմամբ մեր դիրքերը միանգամայն պարզ են: Մենք մտադիր չենք նրանց գաղափարական որևէ գիշում անել, բայց մենք

ողջունում ենք նրանց հայրենասիրական գործունեությունը կապիտալիստական երկրների հայկական գաղութների պայմաններում»¹։

Համագումարը խնդիր դրեց ընդլայնել և բարելավել մշակութային կապերը արտասահմանյան հայության և նրա առաջադիմական կազմակերպությունների հետ։ Այդ նպատակով լայն աշխատանք ծավալեց արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի հայկական ընկերությունը, իսկ 1964 թվականից այդ աշխատանքն ավելի լայն թափ ստացավ սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծումով։

Հարաբերությունների սերտացումը սփյուռքի հետ՝ մի կողմից, և սովետական կառավարության խաղաղասիրական քաղաքականությունը՝ մյուս կողմից, 1950—60-ական թվականներին նպաստեցին սփյուռքահայ գաղթօջախների քաղաքական մտքի ու գործունեության նոր աշխուժացմանը։ Այս երևույթը նկատելի էր ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Լատինական Ամերիկայի հայության մոտ, բայց առանձնակի ուժով շեշտվեց Մերձավոր Արևելքում։

Հիշյալ ժամանակահատվածը Արաբական Արևելքի երկրների կյանքում հատկանշական է ազատության ու դեմոկրատիայի ձգտող արաբ ժողովրդի և իմպերիալիստների միջև տեղի ունեցած բախումներով։ Այդ երկրների հայ ազգաբնակչությունը, ինչպես միշտ, այս անգամ էլ կանգնեց իր արաբ եղբայրների կողքին։

1956 թվականի աշնանը, Եգիպտոսի դեմ անգլո-ֆրանս-իսրայելյան ինտերվենցիայի և հատկապես Պորտ-Սայդի դեպքերի օրերին հայ ընակչությունն իր բողոքի միահամուռ ձայնը բարձրացրեց իմպերիալիստական ինտերվենտների դեմ։ Եգիպտոսում և Սիրիայում կազմակերպված աշխարհազորայինների մեջ մտան մեծ թվով հայեր։

Քե՛ Եգիպտոսում, թե՛ Սիրիայում իմպերիալիզմը ձախողում կրեց։ Մասնակցելով արաբ ժողովրդի ազատագրական պայքարին, հայ ազգաբնակչությունը պաշտպանում էր նաև իր ազգային շահերը իմպերիալիզմի և ռեակցիայի ոտնձգություններից։

Իր քաղաքական նպատակների համար սփյուռքահայությունը օգտագործելու ձգտումների մեջ իմպերիալիզմը անընդհատ ձախողումներ է կրում, որովհետև սփյուռքահայությունը ամուր և անքակտելի թելերով կապված է մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ։ Ուստի իմպերիալիստները առաջին հերթին ձգտում են կտրել սփյուռքահայությունը Սովետական Հայաստանից, քանզի նրանց միջև եղած քաղաքական, մշակութային, եկեղեցական բոլոր կապող հանգույցները։ Այդ նպատակով թիրախ ընտրվեց հայաստանյայց եկեղեցին։ Իրերի պատմական բերումով աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի հետ միասին, սփռվել էր նաև նրա եկեղեցին, որի կենտրոնը եղել և մնում է էջմիածինը։ Դաշնակցությունը ձգտում էր սփյուռքում ստեղծել էջմիածնի հակաաթոռ, նպատակ ունենալով աստիճանաբար հանել սփյուռքի եկեղեցիներն ու թեմերը էջմիածնի ենթակայությունից և կցել դրանք հակաաթոռին։ Դաշնակցականներն ընտրեցին Կիլիկիայի կաթողիկոսությունը, որը

¹ Յա. Զարոբյան, Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմկուսի XXII համագումարին, Սրեան, 1961, էջ 123։

դրնվում է Անթիլիասում (Լիբանան)։ Բայց այդ ծրագիրը երկար ժամանակ ղլուխ չէր գալիս՝ առաջադիմական ուժերի և եկեղեցու հայրենասեր գործիչների ուժեղ հակադրության շնորհիվ։

1956 թվականին, ռեակցիոն ուժերի օգնությամբ, դաշնակցականներին հաջողվեց Կիլիկիայի կաթողիկոսական աթոռին բարձրացնել իրենց թեկնածուին։ Դրանով հայաստանյաց եկեղեցու մեջ ծայր առավ երկփեղկում։ Չնայած դեմոկրատական ճակատի բռնն պայքարին և ժողովրդի միահամուռ բողոքին, դաշնակցականները Կիլիկիայի կաթողիկոսությանը կցեցին Հունաստանի և Իրանի հայկական թեմերը, նոր թեմ ստեղծեցին ԱՄՆ-ում։

Սփյուռքահայության քաղաքական կյանքի նոր վերելքին նպաստեցին Հայաստանում սովետական իշխանության հաստատման քառասուններորդ տարիիցը, Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը, Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը։

Հայաստանում սովետական իշխանության հաստատման քառասուններորդ տարեդարձի տոնակատարությանը մասնակցեցին ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Արաբական Միացյալ Հանրապետությունից, Լիբանանից, Արգենտինայից, Բրազիլիայից, Ռումինիայից, Բուլղարիայից ժամանած հյուրեր։ Սփյուռքահայների պատվիրակներին ընդունեցին Սովետական Միության և Հայաստանի կառավարության ղեկավարները։

Սփյուռքի բոլոր գաղթօջախներում կուսակցական, մշակութային կաղմակերպությունների, կրթական հաստատությունների նախաձեռնությամբ, ինչպես նաև մամուլի օրգաններում, լայնորեն նշվեցին այդ հիշարժան տարեկիցները։

1965 թվականին նշվեց 1915 թվականի եղեռնի 50-ամյակը։ Դատապարտելով թուրքական կառավարության կողմից կազմակերպված հայերի այդ մասսայական ցեղասպանությունը, սփյուռքահայությունը էլ ավելի փարվեց մայր հայրենիքին։

Եղեռնի 50-ամյակի առթիվ Սովետական Հայաստանում կաղմակերպվեցին գիտական սեսիաներ, մշակութային միջոցառումներ։ Այդ հարցը լուսաբանվեց հանրապետական մամուլում, գիտական աշխատություններում, գեղարվեստական ստեղծագործությունների մեջ։ Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց Երևան քաղաքում կանգնեցնելու եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան։ 1965 թվականի ապրիլի 24-ին Երևանում կայացավ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների ժողովը՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության ղեկավարների մասնակցությամբ։ Ժողովում ղեկուցումով հանդես եկավ հանրապետության գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը։ «Կառուցելով նոր կյանք, — ասաց Վ. Համբարձումյանը, — շենացնելով մեր երկիրը, ամրացնելով սովետական ժողովուրդների բարեկամությունը, մենք գիտակցում ենք, որ իրականացնում ենք նաև հարյուր-հազարավոր մեր զոհված եղբայրների և քույրերի նվիրական երազները։ Մեր անթիվ զոհերի անմոռաց հիշատակը միշտ կողակորի մեղ մեր խաղաղ շինարարական աշխատանքում, կողակորի կառուցելու մեր երիտա-

սարդ սքանչելի երկիրը՝ Սովետական Հայաստանը¹։ Եղեռնի 50-ամյակի նշումը Հայաստանում և սփյուռքում ընդունեց համաժողովրդական բնույթ և անցավ Սովետական Հայաստանի շուրջը ամբողջ հայության էլ ավելի համախմբման, աշխարհում կայուն խաղաղության համար պայքարի նշանաբանով։

Սփյուռքահայ հայրենասիրական կազմակերպությունները ծավալում են կրթական գործը, տարածում հայատառ մամուլը, կազմակերպում մշակութային միջոցառումներ և այլն։ Սփյուռքում հրատարակվում են մեծ քանակությամբ պարբերականներ և գրքեր անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն լեզուներով՝ այն հայերի համար, ովքեր շտիրապետելով մայրենի լեզվին, ձեռնարկում են չկտրվել հայրենիքից և հայկական միջավայրից։

Այսպիսով, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում, սփյուռքահայությունը, առաջադիմական կազմակերպությունների ղեկավարությամբ, հակահարված տվեց ռեակցիայի հարձակումներին և է՛լ ավելի ամրապնդեց կապերը մայր հայրենիքի հետ։

¹ «Սովետական Հայաստան», 1965, 25 ապրիլի։

Մ Շ Ա. Կ ՈՒ Յ Թ Ը

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սփյուռքահայության մշակութային կյանքում լուրջ փոփոխություններ տեղի ունեցան:

Սփյուռքահայ մշակույթը կանգնեց գաղափարական ավելի առաջավոր դիրքերում: Գրականությունը, հրապարակախոսությունը, պատմագիտությունը ալրեցին նկատելի աշխուժացում: Աճեց գրական մի ամբողջ սերունդ, որը նոր ըմբռնումների, նոր գաղափարախոսության և ներշնչման աղբյուր ունի՝ հանձին մայր հայրենիքի հզոր վերելքի: Սակայն դրա կողքին սփյուռքում դրսևորվեցին տագնապալից երևույթներ, մասնավորապես ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Լատինական Ամերիկայի որոշ երկրներում և մի շարք այլ գաղթօջախներում, ուր հարյուր հազարավոր հայեր կանգնած են ձուլման սպառնալիքի առաջ: Մշակույթի որոշ ճյուղեր՝ նկարչությունը, քանդակագործությունը, ճարտարապետությունը աստիճանաբար կորցնում էին իրենց ազգային դրոշմը, հայ արվեստագետների ստեղծագործություններում տեղ էին գտնում օտար կյանքի բարբերն ու հոգեբանությունը:

Ըստ առանձին բնագավառների սփյուռքահայ մշակույթը ներկայացնում էր հետևյալ պատկերը:

1. Կ Ի Թ Ա. Կ Ա Ն Կ Յ Ա Ն Ք Ը

Մշակույթի ոչ մի բնագավառ սփյուռքի ճակատագրի պատկերը այնքան հստակ չի կարող ուրվագծել, որքան կրթական վիճակը, որովհետև գոյատևման առաջին նախապայմանը դպրոցն է: Այն սերունդը, որը փոքր հասակից հաղորդակից չէ մայրենի լեզվին, աշակերտական առաջին թոթովանքներից ուսանում է օտար դպրոցներում, կանգնած է օտարացման ճանապարհին: Այս տեսակետից ողբերգական պատկեր են ներկայացնում ԱՄՆ-ի և Ֆրանսիայի գաղթօջախները: Բավական է ասել, որ ԱՄՆ-ի գաղթօջախը, ուր հայերի թիվը, ինչպես տեսանք, հասնում էր 300—400 հազարի, ուներ ընդամենը 2 տարրական դպրոց՝ 300 աշակերտով:

Պատկերը նույնն է Ֆրանսիայում: Այժմ Ֆրանսիայում ապրում են մոտ 200 հազար հայ, որոնք ունեն ընդամենը 2 դպրոց: Այստեղ, ճիշտ է, կատարվում են հայրենասիրական ջանքեր՝ որոշ երեխաների մայրենի դաստիարակություն տալու ուղղությամբ, բայց այդ բոլորը գրեթե անցնում են ապարդիւն:

Անգամ հայ առաջագին երիտասարդական կազմակերպությունը (ԺԱՅ), որը ամեն զոհողություն հանձն է առնում երիտասարդության մեջ հայկական ոգին պահպանելու համար, հարկադրված է իր պաշտոնական օրգանը («Նոթր վուա») հրատարակել ֆրանսերեն:

Այսպիսով, միայն Ամերիկայում և Ֆրանսիայում ավելի քան կես միլիոն հայեր գտնվել են մայրենի դաստիարակությունից:

Դպրոցական ցանցը հետաքրքիր պատկեր է ներկայացնում Թուրքիայում: Մոտ 70 հազար հայ ապրում են Ստամբուլում և ավելի քան 130 հազար՝ Անատոլիայի տարբեր վայրերում: Ստամբուլում կա 30 հայկական դպրոց: Մնացած վայրերում ոչ միայն արգելված է մայրենի դաստիարակությունը, այլև հայերեն խոսելը: Նրանք փաստորեն ենթարկվում են բռնի ձուլման: Ուրախալի փաստ է, սակայն, որ Ստամբուլում ապրող հայերի ճնշող մեծամասնությունը երեխաներին տալիս է հայկական դաստիարակություն: Աշակերտներն սկզբնական կրթությունը ստանալով ազգային նախակրթարաններում, մեծ մասամբ շարունակում են սովորել հայկական միջնակարգ դպրոցներում, լիցեյներում, երբեմն ֆրանսիական և ամերիկյան, հազվադեպ՝ թուրքական դպրոցներում:

Պետք է հիշատակել մի քանի դպրոցներ, որոնք մեծ դեր են կատարում մշակութային կյանքում: Դրանցից են էսայան, Պեղճյան և այլ վարժարաններ, ուր երկար տարիներ մայրենի դաստիարակություն են ստանում հազարավոր աշակերտներ: 1945 թվականին նշվեց էսայան վարժարանի հիստունամյակը: Այդ առթիվ լույս տեսած սովոր ժողովածուում հանդիպում ենք հարուստ տեղեկությունների՝ վարժարանի կատարած աշխատանքի մասին: Ականավոր դերասանուհի Արուս Ոսկանյանը, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան թղթակից-անդամ, բյուզանդագետ Սիրարփի Տեր-Ներսիսյանը, գրող Հայկանուշ Մառքը, դաշնակահարուհի Գոհարիկ Ղազարոսյանը և ուրիշներ ավարտել են էսայան վարժարանը:

Ավելի քան 130 տարվա պատմություն ունի Ստամբուլիում Գաբու թաղամասի Պեղճյան վարժարանը, որը հայ մշակույթին տվել է հարյուրավոր նշանավոր դեմքեր և այժմ էլ, թեև չունի նախկին փառքը, նկատելի դեր է կատարում հայ երեխաների դաստիարակության գործում¹:

Իր գոյությունը շարունակում է Մխիթարյան վարժարանը: Այստեղ են սովորել Դանիել Վարուժանը, Վահրամ Փափազյանը և ուրիշներ: Շարունակում է գործել հայտնի Կենտրոնական վարժարանը, որի 90-ամյակը լրացավ 1967 թվականին: Մոտ մեկ դարի ընթացքում այդ դպրոցն ավարտած միայն գրողների, արվեստագետների, մանկավարժների թիվը հասնում է մի քանի հարյուրի: Այժմ էլ վերոհիշյալ դպրոցը նկատելի դեր է կատարում պոլսահայ մշակույթի զարգացման գործում:

Իրանում ապրող հայերն ունենին 57 դպրոց²: Այստեղ որոշ թվով հայ աշակերտներ ուսում են ստանում օտար դպրոցներում, մասնավորապես ֆրանսիական և ամերիկյան լիցեյներում: Հայկական նախակրթարաններն ավարտողների մի մասը նույնպես շարունակում է սովորել օտար դպրոցներում:

¹ Տե՛ս Բ. Ագալյան, Պատմություն էսայան վարժարանի, Իսթամբուլ, 1945:

² Տե՛ս «Հարյուրամյա հորեկյան Պեղճյան մայր վարժարանի», Կ. Պոլիս, 1930:

³ Տե՛ս «Հայրենիքի ձայն», 1966, № 49:

Այս բոլորով հանդերձ, Իրանում 20 հազար երեխաներ ընդգրկված են հայկական դպրոցներում: Սիրիայում գործում են 73, Լիբանանում՝ 70 հայկական դպրոց¹: Լիբանանի դպրոցներից 65-ը կենտրոնացված են Բեյրութում, իսկ Սիրիայում դպրոցները ցրված են երկրի տարբեր քաղաքներում, մասնավորապես Հալեպում և Դամասկոսում:

Բեյրութի հայ աշակերտների թիվը մոտենում է 20 հազարի: Ուսման տարիքի գրեթե բոլոր աշակերտներն ընդգրկված են հայկական դպրոցներում, որոնց ղգալի մասը ապահովված է ուսուցչական կադրերով: Բեյրութում կան դպրոցներ, որոնցից յուրաքանչյուրում աշակերտների թիվը հասնում է մինչև 500-ի: Վերջին քառորդ դարում Լիբանանում բացվել են մի շարք նոր դպրոցներ: 1951 թվականին բացվել է Վահան Թեքեյանի անվան դպրոցը, որտեղ մայրենի դաստիարակություն են ստանում մոտ 500 աշակերտ: 1954 թվականին հիմնվել է Էհրամճյան վարժարանը՝ 200 աշակերտով, 1956 թվականին՝ Սիմոնյան կոլեջը, 1957 թվականին՝ նոր բարձրագույն վարժարանը՝ շորս հարյուր աշակերտով: 1962 թվականին հիմնադրվեց Լեոնյան-Նազարյան վարժարանը²:

Վերոհիշյալ և այլ դպրոցների ուսուցիչներից ու ղեկավարներից շատերն են եղել Սովետական Հայաստանում, ծանոթացել ուսման դրվածքին մայր հայրենիքում: Հայաստանում եղել են նաև շատ աշակերտներ, որոնք, հանդըստանալով մեր պիոներական ճամբարներում, հաղորդակից են դարձել հանրապետության դպրոցականների առօրյային, ուսումնական, կրթական կյանքին:

Սովետական Հայաստանից սփյուռքահայ դպրոցներին պարբերաբար ուղարկվում են դասագրքեր: Դա մեծ օժանդակություն է նրանց:

Լիբանանի, Սիրիայի և այլ վայրերի դպրոցներն ավարտած հայ աշակերտները հարկադրված են բարձրագույն կրթություն ստանալ ղերազանցապես օտար համալսարաններում: 1962—63 ուսումնական տարում Լիբանանի համալսարաններում և կոլեջներում սովորող հայ ուսանող-ուսանողուհիների թիվը հասնում էր 2,500-ի: Նրանց բացարձակ մեծամասնությունը, լինելով հայկական դպրոցների շրջանավարտներ, հաղորդակից են մայրենի մշակույթին:

Մի քանի տարի է, ինչ Բեյրութից, Ստամբուլից և սփյուռքի այլ գաղթօջախներից հայ ուսանողներ են գալիս Երևան, սովորում մայր հայրենիքի բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ պետական համալսարանում, պոլիտեխնիկական, բժշկական ինստիտուտներում, Կոմիտասի անվան կոնսերվատորիայում և այլ հաստատություններում: Այժմ սփյուռքահայ օջախներն ստանում են ինչպես միջնակարգ, այնպես էլ հայկական բարձրագույն կրթության բուհեր, որոնք նկատելի դեր են կատարում օտար ափերում ցրված հայերի մտավոր կյանքում:

Սփյուռքի կրթական գործին օգնելու նպատակով վերջին շրջանում ձեռնարկվեց մի նոր միջոցառում: Սովետական Հայաստանից առանձին գաղթօջախներ ուղարկվեցին որակյալ դասախոսներ, որոնք հայագիտության կարևոր

¹ Տե՛ս «Հայրենիքի ձայն», 1966, № 49:

² Տե՛ս Սփյուռքահայ ալրոմ, հատ. Ա, Վենետիկ, 1965:

հարցերի մասին դասախոսություններ կարդացին որոշ ուսումնական հաստատություններում:

Այսպիսով, սերտ կապ է ստեղծվել սփյուռքի և մայր հայրենիքի միջև, հատկապես դպրոցական, կրթական աշխատանքներում:

2. ՄԱՄՈՒԼԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1961 թվականին սփյուռքում լույս էր տեսնում 134 անուն պարբերական, որից 16-ը՝ օրաթերթ, 5-ը՝ եռօրյա, 24-ը՝ շաբաթաթերթ, 41-ը՝ ամսագիր, իսկ 45-ը՝ տարբեր պարբերականություն ունեցող հրատարակություններ (եռամսյա, կիսամյա, տարեգիրք) և այլն¹: Եթե նկատի ունենանք նաև կարճ ժամանակ հրատարակված և դադարած պարբերականները, ապա վերջին 25 տարվա ընթացքում կունենանք ավելի քան 200 անուն թերթ ու ամսագիր, որոնք հայերեն լեզվով լույս են տեսել տարբեր երկրներում:

Ետպատերազմյան տարիներին նկատելի վերելք ապրեց մայր հայրենիքի հետ կապված առաջադիմական մամուլը: Ասպարեզ եկան առաջադիմական ուղղությամբ տասնյակ նոր պարբերականներ: Ավելի ու ավելի դեպի մայր հայրենիք թեքվեցին հնչակյան և ռամկավար թերթերը: Նույն ժամանակամիջոցի սփյուռքահայ պարբերական մամուլի համար բնորոշ է ազգայնական գաղափարախոսության թուլացումը, այդ գաղափարախոսությունը կրող թերթերի և հանդեսների տպաքանակի անկումը, ծավալի փոքրացումը:

Նկատելի երևույթ է նաև այն, որ հայերեն լեզվով կրթական բավականաչափ մեծ ցանց ունեցող այնպիսի մի երկիր, ինչպիսին Իրանն է, ունի միայն 1—2 հայերեն պարբերական, մինչդեռ ամերիկահայ գաղութը, որ գրեթե զուրկ է դպրոցական կյանքից, ունի երեսունից ավելի թերթ ու ամսագիր: Նույնը պետք է ասել Ֆրանսահայ գաղթօջախի մասին, որտեղ հրատարակվում են տասից ավելի հայերեն պարբերականներ:

Լիբանանահայ մամուլը վերջին երկու տասնամյակների ընթացքում նկատելի չափով, կարծես, ուղղություն է տալիս սփյուռքահայ կյանքին: Դեռևս պատերազմի տարիներին Բեյրութում լույս էին տեսնում տարբեր կուսակցությունների գաղափարախոսությունն արտահայտող մի քանի թերթեր, որոնց մեջ նկատելի էր առաջադիմական մամուլի աշխուժացումը («Ժողովրդի ձայն», «Առավոտ» և այլն):

Պատերազմից անմիջապես հետո, 1946 թվականին, Բեյրութում սկսեց հրատարակվել «Անի» ամսագիրը՝ բանաստեղծ Վահե Վահյանի խմբագրությամբ: Կարելի է ասել, որ Ա. Չոպանյանի «Անահիտ»-ից հետո «Անի»-ն ամենալուրջ հեղինակություն վայելող և տարածվող հրատարակություններից էր, որի էջերում տպագրվեցին մնայուն արժեք ներկայացնող գեղարվեստական, բանասիրական, քննադատական շատ ստեղծագործություններ: Էականը այն առաջադիմական շեշտված գաղափարախոսությունն էր, որով հրապարակվեցավ այդ ամսագիրը՝ առանց հավակնոտ պոռոտախոսության: «Անի»-ն ամբողջ հասակով մեկ ծառացավ մինչ այդ գրականության հիմնական նյութը

¹ Տե՛ս Ա. Տեր-Խաչատրյան, Հայ մամուլի ցուցահանդես (1794—1961), Բեյրութ, 1961:

կազմող լալկանություն, եղևնի ահասարսուռ դրվագները, մեծ մասամբ առանց գեղարվեստական զգեստավորման, ներկայացնող գրականության դեմ: «Անի»-ն ազդարարում էր շմոռանալ անցյալը, բայց միաժամանակ նշում էր, որ նոր սերնդին չպետք է թմրեցնել լաց ու կոծով, նրան հարկավոր է մղել դեպի լավատեսություն, որի աղբյուրը մայր հայրենիքի փառահեղ լուսարացն է, նրա ծաղկումը:

Լիբանանում լույս են տեսնում մոտ 30 պարբերական: Բնյութում հրատարակվում էր հայերեն չորս օրաթերթ («Արարատ», «Զարթոնք», «Այգ» և «Ազդակ»), հինգ շաբաթաթերթ («Հառաջ», «Նաիրի», «Սփյուռք», «Մասիս» և «Նոր կյանք»), մի քանի ամսագիր («Հասկ», «Բագին», «Բժիշկ», «Արարատ գրական» և «Շիրակ»), մի տարեգիրք և այլն¹: Զգալի թիվ կազմող այս պարբերականները, որոնք տարածվում են ոչ միայն Լիբանանում ու Սիրիայում, այլև Եգիպտոսում, Ամերիկայում և այլուր, նկատելի դեր են կատարում սփյուռքահայ կյանքում: Լայն տարածում ունեն «Մեր նշանաբանն է հառաջ» շաբաթաթերթը:

Բնյութում լույս տեսնող պարբերականներից են հնչակյանների «Արարատ» և ռամկավարների «Զարթոնք» օրաթերթերը, որոնք իրենց էջերում լուսարանում են ոչ միայն սփյուռքահայ կյանքը, այլև Սովետական Հայաստանի տնտեսական ու մշակութային վերելքը: Իր գրական հակումներով աչքի է ընկնում Ա. Մառուկյանի «Նաիրի» շաբաթաթերթը:

Հայ մտավորականությունը աշխատակցում է նաև օտար մամուլին, արաբերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով լույս տեսնող թերթերին: Բնյութում Տիգրան Թոսպատի «Սը Սուար» («Երեկո») օրաթերթը նկատելի դեր է կատարում հայ կյանքի բնորոշ կողմերը օտարներին ներկայացնելու գործում: Արաբական երկրներում աճած, տեղական բարձրին ու լեզվին ծանոթ հայ մտավորականներից ոմանք կատարում են արաբերենից հայերեն, հայերենից՝ արաբերեն թարգմանություններ, որոնք հիմնականում տպագրվում են պարբերական մամուլի էջերում: Դրա շնորհիվ հայ մշակույթն այն աստիճան է մոտեցել արաբ ժողովրդին, որ առանձին արաբներ, սովորելով հայերեն, կատարում են թարգմանություններ: Հիշատակության արժանի է Խալիլ Նազմին («Հալեպ»), որը թարգմանել է Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» և Հ. Շիրազի «Սիամանթո և Խաջեղարե» պոեմը: Երկու գործերն էլ լույս են տեսել շքեղ հրատարակությամբ:

Հայ և արաբ ժողովուրդների մերձեցման գործում մեծ դեր են կատարում առաջադիմական թերթերը, որոնք պարբերաբար հրատարակում են հոդվածներ արաբական գրականության և արվեստի մասին, թարգմանություններ՝ արաբական դասական և ժամանակակից գրականությունից:

Սիրիայում հայ մամուլը համեմատաբար թույլ է զարգացած: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հալեպում մի քանի տարի լույս էր տեսնում «Սուրիա» թերթը, որը լուսնալույսով տպագրական անհրաժեշտ հնարավորություններ և հմուտ աշխատակիցներ, այնուամենայնիվ, ճիգեր էր թա-

¹ Տե՛ս Ա. Տեր-Խաչատրյան, Հայ մամուլի ցուցահանդես, էջ 12:

փում մայր հայրենիքի և սիրիահայ դադթօջախի մշակութային կապերի ամրապնդման գործում:

Եգիպտոսի հայերեն պարբերականների կյանքում էական փոփոխություններ տեղի չունեցան: Այնտեղ շարունակում են լույս տեսնել նախորդ տասնամյակներից եկող «Արև» և «Հուսաբեր» օրաթերթերը, «Սավառնակ» շաբաթաթերթը (Կահիրե), «Արաբա» շաբաթաթերթը (Ալեքսանդրիա): Ուշագրավ միակ նոր հրատարակությունը «Զահակիր» պարբերականն է, որ սկսեց լույս տեսնել 1950-ական թվականների երկրորդ կեսից, ապա դադարեց: Այժմ նորից է հրատարակվում Ս. Բալայանի խմբագրությամբ: Նա ունի առաջադիմական ուղղություն:

Հիշատակված պարբերականներից ամենից տարեցը (որը արդեն բոլորի է իր գոյության կես դարը) և դադթօջախի կյանքում նշանակալից դեր կատարողը ռամկավարների «Արև» օրաթերթն է: Անցյալում նա ունեցել է այնպիսի ականավոր աշխատակիցներ և խմբագիրներ, ինչպիսիք են Ե. Օտյանը, Վ. Թեքեյանը, Միք. Կյուրճյանը և ուրիշներ: «Արև»-ը մերկացնում է դաշնակցական մամուլի հակասովետական զրպարտությունները, պրոպագանդում է Սովետական Հայաստանի տնտեսական ու մշակութային վերելքը:

Ամերիկահայ մամուլը նույնպես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո քանակական աճ գրեթե չունեցավ: Այստեղ էլ ուժեղացան առաջադիմական ճակատի մամուլի դիրքերը: Բացառիկ դեր է կատարում «Լրաբեր» թերթը, որը ծնունդ առնելով քսանական թվականների սկզբներից, վերանվանումներով («Բանվոր», «Նոր աշխարհ», «Լրաբեր») շարունակում է իր գոյությունը մինչև այժմ՝ աներբ մնալով հայրենիքի պաշտպանության դիրքերում: «Լրաբերում» երկար ժամանակ հայրենանվեր գործ են կատարել Օ. Սարյանը, Կ. Սիտալը, Պ. Սեւյանը, Ա. Զարդարյանը, Մ. Մարտենցը, Վ. Ղազարյանը և ուրիշներ:

ԱՄՆ-ի հայ առաջադիմական ուժերը, որոնք շատ հարցերում պաշտպանում էին Սովետական Հայաստանը, վերջին տարիներին ավելի վճռական դիրք զբաղեցին, իրենց օրգանների էջերը լայնորեն տրամադրելով մայր հայրենիքի հետ կապի ուժեղացմանը: Անշուշտ, հնչակյան և ռամկավար այդ թերթերը զաղափարախոսական հիմնական հարցերում այժմ էլ կանգնած են այլ ուղու վրա, քան, ասենք, «Լրաբերը», սակայն, այդուհանդերձ, չպետք է թերագնահատել օգտակար այն մեծ աշխատանքը, որ նրանք կատարում են Սովետական Հայաստանի հաջողությունները պրոպագանդելու, հայրենիքի վերելքին օժանդակելու, այն որպես սփյուռքահայության վերջնական օթեանը ներկայացնելու ուղղությամբ: Այդ տեսակետից հիշատակության արժանի են հնչակյանների «Երիտասարդ Հայաստանը» և ռամկավարների «Պայքարը», որոնք մեծ տարածում ունեն սփյուռքում:

Մամուլը մեծապես նպաստում է գեղարվեստական գրականության զարգացմանը: Ընթերցողների թվի պակասի պատճառով միշտ էլ դժվար է եղել գրքեր հրատարակել: Շատ գրողներ, պատմաբաններ, հարկադրված, իրենց ստեղծագործությունները տպագրել են թերթերում կամ հանդեսներում: Դրանց զգալի մասը, նույնիսկ մնայուն արժեք ներկայացնող ստեղծագործություններ, այնպես էլ մնացել են մամուլի էջերում:

1920—1930-ական թվականներին, ընդհուպ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը, սփյուռքահայ մամուլը, հատկապես օրաթերթերը, իրենց լայնածավալ էջերը հարկադրված էին լցնել ֆրանսերենից ու անգլերենից թարգմանված վեպերով: Պատերազմի առաջին օրերից տասնյակ օրաթերթեր ու շաբաթաթերթեր սկսեցին հրապարակել սովետական գրողների ստեղծագործությունները՝ հարյուրավոր բանաստեղծություններ, սովարածավալ վեպեր և այլն: Ստեփան Զորյանի «Պապ թագավորը», «Հայոց բերդը», Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանքը», Վախթանգ Անանյանի «Սևանի ափին», «Հովազածորի գերիները», Գուրգեն Մահարու, Սերո Խանդադյանի, Հրաչյա Քոչարի և այլ գրողների բազմաթիվ գործեր տպագրվել են, հաճախ միաժամանակ, մի քանի թերթերում:

Գրական-գեղարվեստական պարբերականներից հիշատակության արժանի է Բ. Նուրիկյանի խմբագրությամբ և որոշ ընդհատումներով երկար տարիներ Նյու-Յորքում լույս տեսած «Նոր գիր» եռամսյա հանդեսը, որը վերջնականապես դադարեց 1954 թվականին:

Վերջին տարիներին Նյու-Յորքում լույս տեսնող «Ծիրանի գոտի» եռամսյա հանդեսը, շունենալով նախորդների կշիռը, ջանքեր է թափում մասնավորապես երիտասարդ սերնդի մեջ գրական ճաշակ զարգացնելու ուղղությամբ:

Լույս են տեսնում նաև մի շարք այլ շաբաթաթերթեր ու ամսագրեր, որոնց դերը անհամեմատ փոքր է: Դրանցից են «Կոունկ», «Հայաստանի կոչնակ» (դադարել է 1968 թվականի վերջին), «Հայաստանյայց եկեղեցի», «Հուշարար-Միություն» և այլն: Վերջինս լույս է տեսնում սփյուռքի համար անսովոր մեծ տպաքանակով՝ 10 հազար, հայերեն, նույնքան էլ անգլերեն լեզվով, սակայն, հանդիսանալով Հայկական Բարեգործական ընդհանուր միության պաշտոնաթերթը, իր էջերը գերազանցապես լցնում է այդ միության գործունեությանը վերաբերող նյութերով, շատ հազվադեպ տեղ տալով գրական, հրապարակախոսական գրվածքների:

Ամերիկայում լույս տեսնող հայերեն պարբերականներից 10-ը հայրենակցական միությունների հրատարակություններ են՝ յուրահատուկ ուղեցույց-տեղեկագիր վերոհիշյալ միությունների կատարած աշխատանքի մասին: Նրանք միաժամանակ տպագրում են համաքաղաքացիների կյանքին ու գործունեությանը վերաբերող տեղեկություններ, տարբեր նյութեր կենցաղային հարցերի, ազգագրության, բանասիրության մասին և այլն: Երբեմն դրանց էջերում տպագրվում են գրական պատառիկներ, Հայաստան այցելած հայրենակիցների տպավորություններ: Այդ պարբերականները մասնավորապես լայն տեղ են տալիս հայկական հին բնակավայրերի անունով մայր հայրենիքում ստեղծված ավանների կյանքի, Հայաստանում ապրող համաքաղաքացիների աշխատանքային հաջողությունների լուսաբանությանը: Այդպիսի պարբերականներից են «Արծվի Վասպուրականի», «Գերմանիկ», «Ձայն Սերաստիո», «Հայ Անթեպ», «Նոր Արաբկիր», «Նոր Խարբերդ», «Նոր Կեսարիա», «Նոր Մալաթիա», «Նոր Սեբաստիա» և այլն:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նկատելի փոփոխություններ կատարվեցին ֆրանսահայ մամուլի կյանքում: Պատերազմի առաջին օրերին փակվեց Ա. Զոպանյանի «Անահիտը»: Պատերազմից հետո լույս տեսավ

մի քանի համար, մինչև 1949 թվականին վերջնականապես փակվելու Պատերազմի առաջին օրերին փակվեց նաև Մ. Պարսամյանի «Կյանք և արվեստ» պարբերականը։ Հ. Բալույանի «Զվարթնոցը», որ 1930-ական թվականներին ակաճավոր աշխատակիցներով ապահովված ծանրակշիռ հրատարակություն էր, պատերազմից հետո լույս էր տեսնում անկանոն, տեական ընդմիջումներով, փակվեց վերջերս։

Նկատելի աշխուժացում ապրեց առաջադիմական մամուլը։ Շ. Տատուրյանը հրատարակեց «Ժողովուրդ» թերթը, որը սփյուռքի նոր գոյավիճակը ճիշտ լուսաբանող առաջին հրատարակությունն էր Ֆրանսիայում։ 1958 թվականին Ա. Ալիքսանյանը Փարիզում սկսեց հրատարակել «Լույս Փարիզի» շաբաթաթերթը, որի էջերում երևացին սովետական գրողներից շատերի երկերը, Հայաստան այցելած մտավորականների ոգևորող տպավորությունները։ Դրանց մեջ ուշագրավ էին երիտասարդ գրող Գեղամ Սեանի ընդարձակ տպավորությունները, որոնք հաջորդաբար տպագրվեցին «Լույս Փարիզում»՝ «Մոգեռն հեքիաթ» վերնագրով։ Այդ թերթը փակելուց հետո նրա խմբագիրը փորձեց օգտակար գործը շարունակել «Լուսադբյուր» պարբերականով, որը, սակայն, կարճատև կյանք ունեցավ։

1960 թվականից Ալիքսանյանը Փարիզում հրատարակում է «Աշխարհ» շաբաթաթերթը (այժմ հոօրյա), որը նկատելի ժողովրդականություն է ձեռք բերել սփյուռքի շատ վայրերում։ Հեռու ազգային սնապարծություն մոլուցքից, «Աշխարհը» արտացոլում է սփյուռքի և մայր հայրենիքի կյանքի բազմալսն կողմերը, իր էջերում դեռեղում ծավալուն վիպեր (Սերո Խանդադյանի «Մխիթար սպարապետը», Զարեհ Որբունու՝ «Նվ եղև մարդ» վեպը և այլն)։

Ֆրանսահայ երիտասարդական միություն օրգան «Նոթր վուա» ֆրանսերեն պարբերականը նկատելի դեր է կատարում օտարազման ճանապարհին գտնվող հայ երիտասարդությանը մայրենի մշակույթի, հայրենիքի հետ կապելու ուղղությամբ։

Բանաստեղծ և նկարիչ Բյուզանդ Թովալյանը 1952 թվականից Փարիզում հրատարակում է «Անդաստան» գրական-գեղարվեստական պարբերականը։ «Անդաստանում» տպագրվում են ֆրանսահայ ավագ և նոր սերնդի գրողների, նկարիչների, արվեստաբանների ստեղծագործությունները։ Թովալյանը ինքն է ձևավորում ու նկարազարդում պարբերականը։ Նա իր ընթերցողներին ծանոթացնում է ժամանակակից ֆրանսիական և այլ երկրների գրականության ու տրվեստի նվաճումներին, հաղորդակից դարձնում միջազգային նշանակություն ունեցող երևույթներին։

Շարունակում են լույս տեսնել հայագիտական երկու հանդեսներ՝ «Բազմավեպ»-ը՝ Խաթիսյան, «Հանդես ամսօրյան»՝ Վիեննայում։ Երկուսն էլ ապրում են իրենց թույլ բողկտումների շրջանը։ Առաջինը 125 տարվա պատկանելի պատմություն ունի, իսկ «Հանդես ամսօրյան» արդեն ութսուն տարեկան է։ Այս հանդեսներում տպագրվում են հայ ժողովրդի հին պատմության ու գրականությանը նվիրված հետազոտություններ։ Սակայն երկուսն էլ թե՛ իրենց ծավալով, թե՛ նյութերի աղքատությամբ և թե՛ քիչ տպաքանակով ամենևին չեն հիշեցնում ոչ միայն XX դարի սկզբի իրենց արշալույսի տարիները, այլ անդամ 1930-ական թվականները։ Հայագիտության դարգացման կենտրոնը

այժմ դարձել է Սովետական Հայաստանը, որտեղ լույս են տեսնում մի շարք գիտական հանդեսներ և հրատարակություններ՝ տասնյակ ականավոր հայագետների աշխատակցությամբ: Հայագիտության վերջին խոսքը Վենետիկից ու Վիեննայից անցել է Երևան:

Առհասարակ այժմ հայագիտությունը սփյուռքում գտնվում է թույլ վիճակում: Այդ մեծ բացը մասամբ կարող է ծածկել 1964 թվականից փարիզում լույս տեսնող «Revue des études Arméniennes» հանդեսը: Նա ունի հարուստ բովանդակություն: Հանդեսը լայն տեղ է տալիս ինչպես արտասահմանյան, այնպես էլ Սովետական Միության հայագետների գործերին:

Անցյալից շարունակվող պարբերականների կողքին («Ժամանակ», «Նոր լուր», «Մարմարա» օրաթերթեր, «Կավոռ» շաբաթաթերթ, «Սուրբ փրկիչ» և «Երջանիկ» տարեգրքեր) ետպատերազմյան տարիներին Ստամբուլում երևացին մի քանի նոր թերթեր ու հանդեսներ: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի: Մի մասը հրատարակվում էր առաջագիտ երիտասարդների ջանքերով և արտահայտում հասարակական ուրույն մի հոսանքի գաղափարախոսությունը (Ա. Ալիքսանյանի խմբագրությամբ լույս տեսնող «Նոր օր» և «Այսօր» թերթերը, Խ. Ամիրյանի «Ճառագայթը» և այլն): Դրանց շուրջը համախորմված առաջագիտ երիտասարդությունը ծառացավ տիրապետող ճնշիչ մթնոլորտի դեմ: Հայաստանի մարդկանց առօրյան, սովետահայ գրականության շատ նմուշներ լայն տեղ էին գտել նշված պարբերականների էջերում: Թուրքական կառավարության համար անհանդուրժելի էր այն ջերմ ու խանդավառ վերաբերմունքը, որ ունեին այդ երիտասարդներն իրենց հայրենիքի նկատմամբ: Վերահաս քաղաքական նոր խստություններն ու ձերբակալությունները կասեցրին պոռթկումը: Այդ թերթերի մեծ մասն ունեցավ կարճ կյանք: Բոլորն էլ փակվեցին: Նրանց խմբագիրները և հիմնական աշխատակիցները հարկադրված, եղան խույս տալ Թուրքիայից, իսկ այնտեղ մնացածները ենթարկվեցին հետապնդումների:

Այդ տարիներին լույս տեսան նաև «Անիվ»՝ գրական-գեղարվեստական, «Պարտեզ»՝ մանկական, «Քուլիս»՝ թատերական հանդեսները և «Սան», «Հանդես մշակույթի» պարբերականները: Վերջին երկուսը Ստամբուլի վաղեմի երկու դպրոցների շրջանավարտների հրատարակություններն էին, «Սուր»՝ Մխիթարյան Սանուց միության, «Հանդես մշակույթին»՝ Կենտրոնական վարժարանի: «Սանը» լույս էր տեսնում ավելի վտիտ տետրակներով և արտահայտում էր Մխիթարյան միաբանության դարավոր վարքագիծը՝ հեռու մնալ քաղաքական դիրքորոշումից: Այդ զգուշությունը մասամբ երևում է նաև «Հանդես մշակույթի» պարբերականի համարներում, որոնք, սակայն, անհամեմատ ձոխ են. և նյութեր են պարունակում Սովետական Հայաստանի մասին:

«Անիվը» հետաքրքիր պարբերական էր, բավականաչափ հարուստ գրական-բանասիրական բովանդակությամբ, բայց ունեցավ կարճ կյանք: Ատրինն Տատրյանի խմբագրությամբ լույս տեսնող «Պարտեզը» ավելի երկար պահպանվեց: Հիշատակության արժանի է Թ. Ազատյանի «Աստղաբերդ» բանասիրական հանդեսը:

Այս հանդեսներից Հ. Այվազլի «Քուլիսը» ամենից կենսունակը դուրս եկավ: Նա անխափան լույս է տեսնում 1946 թվականից մինչև այժմ: Դա մասամբ

պետք է բացատրել նրանով, որ հանդեսը լայն տեղ է տալիս ոչ միայն հայ, թուրք, այլև առհասարակ համաշխարհային բնմարվեստի և կինոյի հիշարժան երևույթներին: «Քուլիսը» պատկերադարձ է և բազմազան բովանդակություն ունի: Նա նյութեր է ղետեղում սփյուռքահայ օջախների թատերական, երաժշտական կյանքի և այլ երևույթների մասին: Նրա էջերում տպագրվում են հոգևածներ հայ ճարտարապետության, քանդակագործության և նկարչության մասին: Ծիշտ է, դրանք գերազանցապես լրագրային բնույթ ունեն, հաճախ բավական մակերեսային, բայց ընթերցողի, այն էլ թուրքիայում ապրողի համար օգտակար են:

Ստամբուլի երեք օրաթերթերից «Նոր լուրը» դադարել է 1954 թվականին, խմբագիր Վահան Թոշիկյանի մահով: Իսկ «Ժամանակը» և «Մարմարան» շարունակում են իրենց գոյությունը: «Ժամանակը», ավանդական զգուշավոր վարքագիծը պահպանելով հանդերձ՝ ավելի հաճախ է տեղեկություններ հաղորդում Հայաստանի մասին:

Նկատի ունենալով գաղթօջախի մեծությունը, կարելի է ասել, որ իրանում միշտ թույլ է եղել պարբերական մամուլը: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և պատերազմից հետո Թեհրանում լույս տեսնող «Վերածրնունդ» թերթը միակն էր, որ կարողացավ արմատական դիրք բռնել իրանահայ դադուկին հուղող հարցերի նկատմամբ: Նրա խմբագիր Հ. Գարազաշը մասնակցեց Հայաստանի սովետական գրողների երկրորդ համագումարին: Վերադառնալով իրան՝ նա առավել համարձակությամբ թերթի էջերը տրամադրեց Սովետական Հայաստանի կյանքի ու առօրյայի լուսաբանությանը: Դժբախտաբար Գարազաշի մահով (1960) դադարեց այդ պարբերականը:

* * *

Նախապատերազմյան տարիներին սփյուռքահայ գրականությունը ապրում էր մեծ եղեռնի մղձավանջով, անցյալի վերհուշով, ներկայի անորոշությամբ և սարսափով: Ետպատերազմյան ժամանակաշրջանում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները, մասնավորապես հայրենիքի հետ սփյուռքի կապի ընդլայնումը խորապես փոխեցին գրականության պատկերը: Առաջին բնորոշ առանձնահատկությունը, որ նկատվեց սփյուռքի գրականության մեջ, թեմատիկայի փոփոխությունն էր: Անշուշտ, գրականության մեջ շարունակվեց և՛ եղեռնի դրվագների արտացոլումը, և՛ անցյալի վերհուշը, և՛ սփյուռքի ապագայի անորոշության սարսափը, բայց Սովետական Հայաստանի կյանքի լայն թափանցումը սփյուռքահայ մամուլի էջերը նրան հաղորդեց մի յուրահատուկ լավատեսություն:

Ազգային գաղափարախոսությանը սնունդ տվող գրողներից շատերը մահացել էին կամ ասպարեղից քաշվել: Սկսվեց սեփական կուսակցությունից՝ դաշնակցությունից պոկվելու, նրան հակադրվելու մի նոր շարժում: Այդ կուսակցությունից հեռացան Անդրանիկ Մառությանը, Շահան Նաթալին, նրանցից առաջ հեռացել էր Շահան Շահնուրը: Դաշնակցությունից իրենց կապերը խզեցին և ուրիշներ:

Այս փուլուման պայմաններում առնականացավ մի գրականություն, որի ստեղծողները, զգված ազգայնամոլ հանգերգից, փորձեցին սերտ կապ ստեղծել սփյուռքի և մայր հայրենիքի գրականության միջև, ոչ միայն խանդավառվել հայրենիքում կատարվածով, այլև ապրել մայր հայրենիքի էությունում, այն դարձնել իրենց ստեղծագործության սնունդը:

Փոխադարձ շփման, հարատև մերձեցման մթնոլորտում ստեղծված նոր գրականությունը շատ է տարբերվում 1930-ական թվականների գրականությունից: Նոր գրականության հերոսը, աննշան բացառությամբ, կենսուրախ է, վստահ վաղվա նկատմամբ:

Սփյուռքի և հայրենիքի հոգեկան մերձեցմանը մեծապես նպաստեցին Հայաստան այցելած սփյուռքահայ ականավոր գրողների տպավորությունները, որ լույս տեսան մամուլում կամ առանձին գրքերով: Դրանց հեղինակները վերականգնացած էին տեսնում այն, ինչի մասն էին ողբացել մի քանի տասնամյակ առաջ: Հայրենիքում նրանք տեսան նորանոր քաղաքների, ավանների շինարարությունը, որոնցից շատերը կրում են պատմական Հայաստանի տեղանունները (Արաբկիր, Սեբաստիա, Մալաթիա, Հաճըն, Կիլիկիա, Զեյթուն և այլն): Պատմական մի փոքրիկ Արաբկիր քաղաքի փոխարեն ծնվել էր նույնանուն և նրա տասնապատիկ մեծությունն ունեցող արդիական մի ամբողջ քաղաքամաս: Եվ որ շատ կարևոր է՝ նրանք Հայաստանում տեսան իր հոգեբանությամբ, հույզերով ու ապրումներով նոր մարդուն, շինարար, ստեղծագործող մարդուն: Այդ բոլորը նրանց սրտերն ու մտքերը լցրին անսահման հավատով ու լավատեսությամբ Սովետական Հայաստանի նկատմամբ:

Հայաստանյան տպավորությունների մեջ հեղինակները վերածուլվում էին իրենց տեսած նոր կյանքի հետ, դառնում նրա բաղկացուցիչ մասը, իրենցն էին համարում այդ ամբողջ հարստությունը, լինի դա նյութական, թե հոգևոր, պարծենում նրանով: Ծանապարհորդական այդ տպավորությունների զգալի մասը ներկայացնում է նաև գրական արժեք: Դրանք գրված են խոր ընդհանրացումներով, այնտեղ հաճախ նշմարելի են դեմքեր ու դեպքեր, որպես ամբողջական կերպարներ ու երևույթներ: Տարբերությունն այն է, որ նրանք իրական են, վավերական: Ոմանք իրենց տպավորություններից առանձին հատվածներ հետագայում դարձրին գեղարվեստական գրականության նյութ. այսպիսով Հայաստանը սփյուռքին չներկայացավ միայն հրապարակախոսական տարազով, այլև դարձավ գեղարվեստական ստեղծագործության նյութ: Մինչ այդ սփյուռքահայ գրողներն իրենց տեսադաշտում ունեին շատ փոքր մի տարածություն՝ իրենց շրջապատը և երազ դարձած մշուշապատ անցյալը:

Սփյուռքահայ մի շարք գաղթօջախներ (Հունաստան, Եգիպտոս, Բուլղարիա, Ռումինիա և այլն) վերջին տասնամյակների ընթացքում ունեցան գրական կյանքի թույլ բոցկլտումներ: Լույս են տեսել գրական- գեղարվեստական և պատմա-բանասիրական գրքեր, որոնք լայն տարածում չեն ունեցել:

Գրական կյանքը անհամեմատ աշխույժ է եղել ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Լիբանանում, մասամբ Թուրքիայում և Իրանում:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում անցած երկու տասնամյակների ընթացքում տարբեր հրատարակչությունների և մշակութային կազմակերպու-

թյունների կողմից հրատարակվել են հարյուրավոր գրքեր: Դրանք բազմազան են թե՛ ժանրային առումով և թե՛ իրենց բարձրացրած հարցերով: Մեծ թիվ են կազմում հուշագրությունները, պատմա-բանասիրական աշխատությունները, գրական-գեղարվեստական երկերը:

Հատկանշական է, որ այս ամբողջ ժամանակաշրջանում ամերիկահայ գրականությունը չի տվել հայ հորիզոններում տեսանելի որևէ նոր դեմք, որը տեղ գրավի հայ դասական գրականության մեջ: Դա բնական է այդ գաղթօջախի համար, քանի որ նա զուրկ է մայրենի դաստիարակությունից և նոր սերունդը ամբողջովին գտնվում է օտարացման ճանապարհին: Հրապարակի վրա են այն գրողները, որոնք սկսել են ստեղծագործել 1920—1930-ական թվականներին: Նկատելի տարբերությունն այն է, որ որոշ հեղինակներ անցած ժամանակամիջոցում ապրեցին ստեղծագործական անկում, որիշները նկատելի վերելք ունեցան գեղարվեստական և գաղափարախոսական առումով, իսկ որոշ հեղինակներ էլ հայ գրականությունից անցան ամերիկյան գրականության:

Համաստեղը, որ հին գյուղը պատկերող պատմվածքներով իշխում էր ոչ միայն ամերիկահայ, այլև սփյուռքահայ գրականության վրա, որոշ նահանջ կատարեց «Սպիտակ ձիավորը» երկհատոր վեպով, նահանջ թե գաղափարախոսական առումով, թե գեղարվեստական: Նրա նահանջը շարունակվեց մինչև «Աղոթամատյանը», որտեղ, դժգոհ մարդուց, միջավայրից՝ նա կամա թե ակամա, գնում էր դեպի անէականը, գերբնականը: Համաստեղի այս նահանջը բնութագրական է սփյուռքահայ այն գրողների համար, որոնք չկարողացան կենսահայուստանալ մայր հայրենիքից, հին հայրենիքի կորստից հետո չկարողացան տեսնել նոր հայրենիքը:

Վ. Հայկը իր «Հայրենի ծխան» շարքում ունի գրական գեղեցիկ մի էջ, որը խորհրդանշական է առհասարակ ամերիկահայ կյանքի համար: Այդ պատկերը կոչվում է «Ծր մը Հայկ Նահապետի հետ»: Հեղինակը նկարագրում է մի ընտանիք, որը, չնայած երկար տարիներ ապրում է Ամերիկայում, բայց դեռևս գաղթականական անորոշության մեջ է, տեղից տեղ է անցնում, մի բնակությանից մյուսը: Նոր բնակարանում նրա միակ զարդը Հայկ Նահապետի նկարն է, ով գիտի՝ բերված որ հեռավոր անկյունից, Թուրքիայի որ քաղաքից: Այդ ընտանիքի ապավինը ոչ թե ամերիկյան կառավարությունն է, այլ Հայկ Նահապետը, որի որդիները ցրվել են աշխարհով մեկ, իսկ ինքը, ահա, թախծոտ ակնարկով դիտում է նկարը և ոչինչ չի կարողանում անել¹:

Որքան մեծ է ձուլման վտանգը, այնքան ամուր են կառնում գրողներն այդ նյութին: Հենց Վահե Հայկի պատմվածքների զգալի մասը այդ մեծ վշտի մղկտումներն են («Առաջին ձմեռը», «Վերը աստված կա», «Կարապետ», «Հոգվոցն հանգուցելոց», «Աստ հանգլի» և այլն):

Հայրենիք այցելելուց հետո Վ. Հայկը գրեց իր տպավորությունները, նաև նոր պատմվածքներ, սոգորված առավել լավատեսությամբ: Բայց մեծ ողբերգությունը միշտ էլ զգացնել է տվել իրեն՝ նրա բոլոր երկերում:

¹ Տե՛ս Վ. Հայկ, Հայրենի ծխան, Երևան, 1960, էջ 13—19:

Այդ վիշտը յուրովի է ներկայացրել Բ. Նուրիկյանը, խարբերոցի մի գրող, որն ընկնելով Ամերիկա, եղել է բանվորական միջավայրում, ամեն քայլափոխում ճաշակել օտարության դառնությունը: Նա այդ կյանքը նկարագրել է մի շարք պատմվածքներում («Մաշած ավելը», «Ծաղիկները շեն ուտվիր» և այլն), Դրանք՝ փոքր կտավի երկեր են: Հեղինակը չի սիրում երկարապատում նկարագրություններ, բայց հակիրճության մեջ էլ կարողանում է տիպականացնել և՛ մարդկանց, և՛ երևույթները, տալ գաղթական հայի տխուր ճակատագիրը ամերիկյան բանվորական ավաններում, զուգահեռ ներկայացնելով օտարազգի աշխատավորներին, որոնք ծնունդով գուցե ամերիկացի, բայց նույնքան խորթ են այդ երկրին¹:

Ամերիկահայ գրականության ականավոր դեմքերից է Անդրեասյանը՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիների սարսափները ճաշակած, մանկատների դառն օրերը տեսած մի գրող: Նա սկսել է գրել 1930-ական թվականներից, երբ սփյուռքահայ գրականության վրա տիրակալորեն թևածում էր համազգային մեծ ողբերգության սարսուռը: Անդրեասյանը չէր կարող բացառություն կազմել, շարտացույցի որբանոցային ու գաղթականական կյանքը, բայց նա գաղթաշխարհի ծանր հոգեվիճակի շրջանակում չմնաց, տեսավ նաև ամերիկյան կյանքի ներքին՝ սոցիալական հակասությունները, նկարագրեց ցեղային խտրականության ցնցող տեսարաններ («Սպիտակ արդարություն»):

1947 թվականին լույս տեսավ Անդրեասյանի պատմվածքների նոր ժողովածուն՝ «Կարմիր ասպատակի մը օրագրեն» խորագրով, ուր պատկերված է ուկրաինական պարտիզանների հերոսական պայքարը ֆաշիզմի դեմ: Մոտ մեկ տասնամյակ անց տպագրվեց գրողի երրորդ ժողովածուն: Այնտեղ զետեղված պատմվածքների մեծ մասում իրապաշտական գունագեղ վրձնով պատկերված են ամերիկահայ կյանքի բնորոշ կողմերը, ինչպես նաև այն անկեղծ սերը, որ տածում են աշխատավոր հայերը մայր հայրենիքի նկատմամբ²:

Ուշագրավ են Անդրեասյանի վերջին տարիներս հրատարակած «Սփյուռքը և հայրենիքը» հրապարակախոսական հոդվածների ժողովածուն, ուր նա խորհրդածություններ է անում սփյուռքի ճակատագրի ու վիճակի մասին, ինչպես և քննադատական հոդվածների «Խոհեր» ժողովածուն:

Ամերիկահայ գրողներից Կարապետ Սիտալը վերջին երկու տասնամյակում հրատարակեց հուշագրական երկու ստվար ժողովածուներ, որոնցից մեկը կոչվում է «Տեսա իմ երկրի արևածագը», մյուսը՝ «Արևածագ և առավոտ» (1957): Սիտալը Սովետական Հայաստանի ջերմ ու անվերապահ պաշտպանն է, նրա անկեղծ բարեկամը: Կ. Սիտալի «Կաշտի քաջերը», «Մասնաժողով» և «Հովիվ Ազոն» ժողովրդական բանահյուսության չափածո մշակումներ են, որոնք մեկ գրքով վերահրատարակվել են Երևանում, լայն ժողովրդականություն բերելով հեղինակին սովետահայ ընթերցողների շրջանում³:

Անժամանակ վախճանված բանաստեղծ Հակոբ Գույումճյանը գրական ասպարեզ մտնելու առաջին օրերից արտահայտել է դեմոկրատական խավերի

¹ Տե՛ս Բ. Նուրիկյան, Պանդուխտ հոգիներ, Երևան, 1958:

² Տե՛ս Ա. Անդրեասյան, Վերջին կայանը, Պելուք, 1956:

³ Տե՛ս Կ. Սիտալ, Դյուցազնական, Երևան, 1957:

տրամադրությունները՝ Նրա վերջին երկու շափածո. ժողովածուները պարունակում են խանդավառ, միշտ ավյունով լցված բանաստեղծի հայրենակոհ տպավորությունները¹։ Ինչպես Սիտալը, Դույումենյանն էլ իր ստեղծագործություններում ակտիվ քաղաքացի է, նոր, առաջավոր գաղափարների պրոպագանդիստ։ Չնայած երկար տարիներ ապրել է Ամերիկայում, այդ երկիրը խորթ է մնացել նրա հոգուն։ Նրա ներշնչման հիմնական աղբյուրը Հայաստանն է, որի ամեն մի հաջողութամբ ոգևորվում էր պատանեկան խանդավառությամբ։

Ամերիկայից հետո սփյուռքահայ գրականության խոշոր կենտրոններից է Ֆրանսիան, որտեղ վերջին երկու տասնամյակում լույս տեսած գրքերի թիվը հաշվվում է հարյուրներով։ Գաղթօջախի հին դեմքերից Արշակ Չոպանյանը պատերազմից հետո շունենալով գրական նշանակալից արտադրանք, շարունակում էր սփյուռքում պահել իր ծանրակշիռ տեղը։ Հիշարժան է Ա. Չոպանյանի «Ընտիր բանաստեղծություններ»-ի լույս ընծայումը 1950 թվականին, Փարիզում։ Դրանից առաջ նա հրատարակել էր «Հայրեններու բուրաստանը» ստվար ժողովածուն, որ հանդիսանում է հայ միջնադարյան գրականության արժեքավոր մի հավաքածու՝ կազմողի հմուտ առաջաբանով և ծանոթագրություններով։

Արևմտահայ գրականության հին սերնդի ներկայացուցիչներից են Վահան Մալեգյանը և Ծնովք Արմենը։ Երկուսն էլ անցել են գրական երկարամյա ճանապարհ։ Մալեգյանը պատերազմից հետո հրատարակել է բանաստեղծությունների մի քանի ժողովածու, ինչպես նաև հիշողություններ, նամակներ և վավերագրեր²։ Ծնովք Արմենը գեղարվեստական նոր ստեղծագործություններով հանդես չեկավ, այնուամենայնիվ նա շարունակում էր մնալ որպես առաջավոր դիրքերում կանգնած եռանդուն հրապարակախոս։ Հիշատակության արժանի է Փարիզի «Աշխարհ» թերթում հրատարակված նրա ընդարձակ հոդվածաշարքը Հայաստանից ստացած տպավորությունների մասին։

1949 թվականին Փարիզում լույս տեսան Անայիսի (Եվփիմե Ավետիսյան) հիշողությունները՝ «Հուշերս» վերնագրով։ Սփյուռքահայ հուշագրական հարուստ գրականության մեջ այս գիրքը աչքի է ընկնում ամենից առաջ իր գեղարվեստական բարձր ոճով և հարուստ բովանդակությամբ։ Անայիսը բանաստեղծական ճոխ լեզվով և վառ պատկերներով պատմում է առանձին դեպքերի և գործիչների մասին։ Նրա նյութը քաղված է արևմտահայ կյանքի նույնպատերազմյան փոթորկահույզ տարիների և առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի իրականությունից։

Գրական եռուն կյանք ապրեց վիպասան Լևոն Մեսրոպը։ Նա 1939 թվականին Փարիզում լույս ընծայեց «Հաշիշին» վեպը։ Դրան հաջորդեցին «Զարե», «Քերբելայի գիշերները»։ Այս երեք վեպերով հեղինակը ներկայանում է որպես մահմեդական աշխարհի, մասնավորապես Իրանի ու արաբական երկրների կյանքի, կենցաղի, հասկացողությունների, ժողովրդական սովորությունների լավագույն գիտակ։ Նա հրավեր ստացավ և մասնակցեց Հայաստանի գրողների միության երկրորդ համագումարին։ Փարիզ վերադառնալով՝

¹ Տե՛ս Հ. Գույումենյան, Երևանյան երգեր, 1957, Արարատյան ծաղիկներ, Երևան, 1960։

² Տե՛ս Վ. Մալեգյան, Կարապի երգը, Հոգիի ձայներ, Ճամբուն վրա, Ճամբու ծայրը ժողովածուները։

գրեց և հրատարակեց իր ամենածավալուն վեպը՝ «Կախարդող լեռը և ներգաղթող ձին» վերնագրով: Հիշատակված լեռը Արարատն է, որը մագնիսական ուժով աշխարհի բոլոր կողմերից դեպի իրեն է կանչում թափառական հայերին: Վեպը վերահրատարակվել է Երևանում: Նրա գրչին են պատկանում նաև «Շամիրամ երկրորդը» և «Օտարականը»:

Հրաչ Զարդարյանը հրատարակեց սփյուռքը պատկերող ծավալուն մի վեպ՝ «Որբացող մարդիկ», իսկ Զ. Որբունին՝ «Վարձու սենյակ» պատմվածքների ժողովածուն, որին հաջորդեցին նրա «Անձրևոտ օրերը», «Ծվ եղև մարդ», և այլ գրքեր: Որբունին ժամանակակից սփյուռքահայ գրականության աչքի ընկնող դեմքերից է: Նա մշակել է իր ուրույն ոճը, կարողանում է հասարակական հարաբերությունների մեջ տեսնել սոցիալական հակամարտություններ:

Ստեղծագործական բուռն կյանք ունեցավ բանաստեղծուհի Մ. Աթմաճյանը: Պատերազմից անմիջապես հետո լույս տեսավ նրա «Գողգոթայի շուշաններ» բանաստեղծությունների ժողովածուն և «Աստեղաքաղ» գիրքը: Վերջին գրքում կա երկու բանաստեղծություն՝ նվիրված Սովետական Հայաստանին: Դրանք կարոտի մորմոքներ են, արտահայտում են բանաստեղծուհու բուռն ցանկությունը՝ լինել հայրենիքում, խոցված սիրտը ջերմացնել հայրենի տափուրություններով: Հայաստան այցելելուց հետո Աթմաճյանը հրատարակեց «Գաղթաշխարհի երգերը», որտեղ նրա քնարի վրա նոր Հայաստանը թրթռաց ոչ որպես վերացական հասկացողություն, այլ որպես իրականություն:

«Անդաստան» գրական-գեղարվեստական հանդեսի խմբագիր Բ. Թովալյանը հրատարակել է մի քանի ժողովածուներ, բնորոշ վերնագրերով՝ «Ալգահանդես», «Արեազալ», «Հրախաղություն», «Լուսածնունդ» (մեծ մասամբ լափածո երկեր, բոլորն էլ իր նկարագրողամաներով): Այդ գրքերում, ինչպես և Մ. Աթմաճյանի նշված ժողովածուում, նկատելի է անցումը վերացականից դեպի իրականը: Անկախ այն փաստից, որ բանաստեղծի մոտ ձևը որոշ լափով տուրք է տալիս խորհրդապաշտությանը, նրա վերջին ժողովածուն՝ «Լուսածնունդը» (1954), նկատելի առաջընթաց է մյուս երկու գրքերի համեմատությամբ:

Լիբանանահայ գրականության մեջ այլևս չկային արևմտահայ գրողների հին սերնդի ներկայացուցիչները, սակայն այն հեղինակները, որոնք ասպարեզ իջան 30-ական թվականներին և իրենց գրական հասունացումն ապրեցին հուպատերազմյան տարիներին, ինչպես և առավել նոր սերնդի ներկայացուցիչները, շարունակում են արևմտահայ գրականության ավանդները, ստեղծում ուրույն շարժում, որն առավել կենսունակ է, ամբողջական, սերտորեն կապված ժողովրդի հետ: Նրանք ձգտում են դուրս գալ ազգային կյանքի նեղ շրջանակներից, նրան ղուգընթաց արտացոլել՝ նաև տեղական ժողովրդի բարքերը, աննշար շթողնելով սոցիալական բախումներն ու հակամարտությունները:

Այդ գրողներից Վ. Վահյանը ապրել է գաղափարական ուրույն զարգացում: 1930-ական թվականների վերջին լույս ընծայած «Արև-Անձրև» ժողովածուում նկատվում է հեղինակի հիասթափությունը կյանքից, նրա սրտի մորմոքը, անհեռանկար մարդու հոգեկան տվյալանքը:

Նույնպես Երևանի քաղաքական իրադարձությունները փոփոխություն մտցրին բանաստեղծի հոգեկան աշխարհում: «Ոսկե կամուրջ» գրքում Վահյանը գտավ իր գրական ուղին, դարձավ սփյուռքահայ առաջադիմական մի ամբողջ հոսանքի առաջամարտիկներից մեկը՝ թե՛ իր խմբագրած «Անի» ամսագրով և թե՛ գեղարվեստական ստեղծագործություններով, քննադատական-հրապարակախոսական հոդվածներով:

Ա. Մառուկյանի մոտ գրական այդ անցումը ավելի դժվարին եղավ՝ երկունքով, հոգեկան բախումներով: Դա բացատրվում է այն բանով, որ նա գաղափարական այլ դիրքերից էր մոտենում նոր ճամփաներին: Բայց, ի պատիվ պկանավոր գրողի, պետք է ասել, որ նա այդ ճանապարհը անցավ պատվով: Այժմ Ա. Մառուկյանը Բեյրութում հրատարակվող իր «Նաիրի» պարբերականով ամուր տեղ է գրավում լիբանանահայ գրականության մեջ, նա գրել է արձակ և չափածո, հրատարակել է մի քանի գրքեր: Նրա գլուխ-գործոցն է «Մանկություն չունեցող մարդիկ» գիրքը, որն արտացոլում է եղեռնից փրկված որբերի կյանք մտնելու, սեփական ժողովրդին ծառայելու ծանր ու դժվարին ճանապարհը: Այդ գիրքը սփյուռքահայությունն ընդունեց որպես նոր և նշանակալից երևույթ գրական կյանքում: Պատահական չէ, որ այն վերահրատարակվել է Երևանում, իսկ ռուսերեն՝ Մոսկվայում, մեծ տպաքանակով:

1940-ական թվականներին ասպարեզ եկան մի շարք նոր գրողներ: Նրանցից ուշադրության արժանի են Գառնիկ Աղդարյանը և Արմեն Դարյանը:

1954 թվականին Բեյրութում լույս տեսավ Գ. Աղդարյանի «Պատենշի վրա» բանաստեղծությունների ժողովածուն: Այն իր առողջ զգացողությամբ, առաջավոր գաղափարներով թարմ երանգ մտցրեց սփյուռքահայ գրականության մեջ: Գիրքը վերահրատարակվեց Երևանում, թարգմանվեց նաև ռուսերեն: Նույն հեղինակի «Մատյան ցափի և հատուցման» պոեմը գրված է արժարժվող թեմայի լրջությամբ համապատասխանող արվեստով: Հայ ժողովրդի աննախընթաց ողբերգությունը բնութագրող յուրօրինակ այս սիմֆոնիայում հեղինակը եղեռնը ընկալում է զուսպ զգացողությամբ, ապրում է սփյուռքի անորոշության ցավով, բայց հատուցման ուղին գտնում է հայրենիքի համար, մարդկության համար ապրելու և մաքառելու մեջ: Գ. Աղդարյանի պոեզիայի վրա նկատելի է Ե. Չարենցի բարերար ազդեցությունը:

Արմեն Դարյանի առաջին ժողովածուն պարունակում է հուշագրական պատմվածքներ ու ակնարկներ: Նա ընթերցողին չի զբաղեցնում նեղ, անհատական մանրուքներով, ցուցաբերում է մի ուրույն աշխարհ, անորոշ վիճակում ապրող գաղթական հայի կյանքը՝ օտար միջավայրում, օտար շատ կողմերով, բայց և նման բախտակից արար ժողովրդի ճակատագրին: Դարյանի երկրորդ՝ «Նարիսխեն հեռու» գրքում ամփոփված են պատմվածքներ, պատկերներ, նորավեպեր և երկախոսություններ: Գրքի նյութը «Նարիսխեն հեռու», այսինքն հայրենիքից հեռու ապրող հայության մեծ վիշտն է: Վերջինիս նկարագրությունն իր կիզակետին է հասնում գրքի «Հայկական ողբերգություն» հատվածում: Դեռ մայրենի լեզվին, ազգային կենցաղին ու ավանդություններին կառչած պապիկի ու նրա՝ արդեն ձուլման հոսանքին դեմ-հանդիման կանգնած թոռնիկի զոդարիկ երկախոսությունը սեղմ տողերում ու էջերում արտահայտված մի հուզիչ և ամբողջական գեղարվեստական պատկեր է: Դա-

դափարը ահասարսուռ է՝ երբ անհետանան այդ պապիկներն ու հանգիստ թողնեն իրենց նոր՝ ճանապարհով ընթացող թոռնիկներին, կղաղարի ամերիկահայ մեծ գաղթօջախը:

Գ. Աճեմյանը Բեյրութի հայ մամուլում տպագրել է արձակ մի շարք երկեր, քննադատական հոդվածներ: Առանձին գրքերով հրատարակել է մի քանի ժողովածու, ինչպես և տեսական-քննադատական հոդվածներ պարունակող մի հատոր (1962): Նրա պատկերած աշխարհն էլ հիմնականում սփյուռքահայ կյանքն է իր բնորոշ կողմերով: Նա գիտի կերտել կենդանի կերպարներ, տալով նրանց հոգեբանությունը: Նրա պատմվածքներից մի քանիսը, ինչպես «Կրակ ու հուր մնաց», «Ուրիշները», «Մերօրյա պատմություն հայոց» և այլն մնալուն գործեր են: Առաջադիմական մամուլը ջերմորեն է արտահայտվել Աճեմյանի այդ կարգի երկերի մասին: Լիբանանահայ գրողներից պետք է նշել նաև Սմբատ Փանոսյանին, Հրանտ Գանգրունուն և ուրիշներին:

Իրանահայ գրականությունը՝ արևելահայ գրականության բաղկացուցիչ մասը, իր լեզվով, նախասիրություններով, ազդեցություններով, ընդհանուր միտումով միշտ էլ կապված է եղել կովկասահայ մտավոր շարժման հետ: Բայց տասնամյակների ընթացքում աստիճանաբար նա փոխվեց և այժմ շատ ընդհանրություններ ունի սփյուռքի գրականության հետ:

Դեռևս 1930-ական թվականներին իրանահայ գաղթօջախում ասպարեզ եկան երիտասարդ գրողներ, որոնք փորձեցին կողմնորոշվել դեպի նորը: Նորի այդ զգացողությունը ի հայտ եկավ երկու ուղղությամբ՝ եվրոպական ժամանակակից և սովետահայ գրականությունների ազդեցությամբ: Սակայն գրական այդ նոր սերունդը, որն իր մանիֆեստը հրատարակեց «Նոր էջ» գրական ժողովածուի առաջին գրքում, միատարր չէր: Նկատվում էր երկու ազդեցությունների համատեղումը նույն կամարի տակ: Դրանցից առաջինի կրողները մեծ մասամբ օտար դպրոցներ ավարտած, հաճախ միայն հանրակրթարանում հայերեն սովորած գրողներ էին, քիչ ծանոթ հայկական կյանքին ու հոգեբանությանը: Նրանց մոտ մի տեսակ անտարբերություն կար դեպի հայ կյանքը, դեպի հայ անցյալը, նաև դեպի Սովետական Հայաստանը: Մայրենի գրականությունից կտրված այդ գրողների համար բնորոշ էր գաղափարական երեւորուն վիճակը: Նրանք իրենց չափածո ստեղծագործություններում տարվում էին խոհերով, փիլիսոփայությամբ դարեր շարունակ մարդկային միտքը զբաղեցնող առեղծվածային հարցերի մասին, իսկ եթե տեսնում էին իրենց շրջապատը՝ ժամանակակից Իրանը, ապա այն դիտում էին իրենց անձնական նեղ տեսադաշտից:

Այս խմբի գրողներից է Զորայր Միրզայանը: Բանաստեղծ է և՛ չափածոյում, և՛ արձակում: Նա ձգտում է նոր խոսք ասել, ուրույն ոճ ստեղծել: Նրանում է կյանքի ու մահվան խորհուրդը, սերը՝ մերթ վերացական, քնքուշ, մերթ՝ շատ իրական: Ունի որոշ հուսահատություն, անիմանալի երկյուղ կյանքից, յուրահատուկ թախիծ: Պատկերների մեջ հակասական է: Խորապես ռեալիստական ընկալման կողքին երբեմն տալիս է սիմվոլիստական մութ պատկերներ: Զ. Միրզայանը մինչև կյանքի վերջին տարիները գրեթե հաղորդակից չի եղել հայրենական մշակույթին: Խորապես զգայուն այս բանաստեղծը, մահ-

վանից մեկ-երկու տարի առաջ մտադրվել էր այցելել Հայաստան, սակայն հնարավորություն չունեցավ: Մահացավ 1965 թվականին:

Իրանահայ գրականության դեմքերից են բանաստեղծ-նկարիչ Դևր (Մարգար Ղարաբեկյան), Արա Հովհաննիսյանը, Հ. Մարդը, Գևորգ ԴարՖին: Դևր ստեղծագործություններն աչքի են ընկնում ջերմ, հայրենասիրությամբ, առաջադիմական գաղափարներով: Հայ ժողովրդի ապագայի նկատմամբ վառ հավատը սահում-անցնում է նրա գրեթե բոլոր երկերով: Դևր սիրված բանաստեղծ է ոչ միայն իրանում, այլև ամբողջ սփյուռքում: 1945 թվականին նա լույս ընծայեց իր բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն՝ «Իմ երգերը» վերնագրով: Դևր նաև մշակութային եռանդուն գործիչ է: Երկար տարիներ եղել է «Մխար» գրական-գեղարվեստական միության նախագահը և իրանահայ գրողների միության փոխնախագահը:

Արա Հովհաննիսյանը նույնպես «Նոր էջ» գրական խմբակի եռանդուն անդամներից է: Նրա բանաստեղծություններից շատերը տպագրվել են սփյուռքահայ պարբերականներում: Հովհաննիսյանը իրանահայ գրական կյանքում խոշոր դեր է կատարում նաև որպես թարգմանիչ: Պարսկերենից նա թարգմանել և սփյուռքահայ մամուլում տպագրել է բազմաթիվ երկեր: Առավել ուշագրավ են հայերենից պարսկերեն նրա կատարած թարգմանությունները՝ Շիրվանզադեի «Արտիստը», Թումանյանի «Գիքորը», Գրիգոր Զոհրապի մի քանի պատմվածքները, ինչպես նաև առանձին նմուշներ սովետահայ դրականությունից:

ԴարՖին (Գևորգ Խուդոյան) զբաղվել է գերազանցապես դրամատիկական ստեղծագործություններով: Գրել է բազմաթիվ պիեսներ: Հիշատակության արժանի են հատկապես դրամատիկական այն ստեղծագործությունները, որոնց նյութը վերցված է հայ ժողովրդի պատմական անցյալից («Արյունոտ թագը», «Մեծորպ Մաշտոց» և այլն): Նա նույնպես կատարել է թարգմանություններ («Ռիչարդ 3-րդ», «Լիոնի թղթատարը», «Սիդ» և այլն): 1963 թվականին հրատարակել է կենսագրական մի գրքուկ ականավոր թարգմանիչ Հովհաննես Մասեհյանի մասին: Մահացել է 1964 թվականին:

Թուրքիայում ստեղծված քաղաքական խստագույն պայմաններում ըստ էության անհետանում էր հին սերունդը, իր դասական ավանդներով, իսկ նորը չկար: Հին սերնդից Ստամբուլում ստեղծագործում էր միայն Հակոբ Մնձուրին (Տեմիրճյան)՝ իր նախասիրություններով ինքնատիպ մի գրող: Նա արևմտահայ ռեալիստական արձակի լավագույն ավանդները մեր օրերը բերող գրող է, եղեռնի պատճառով ընդհատված ավանդական գրականության, այսինքն, գյուղը պատկերող գրականության շարունակողը:

Գրական որոշ շարժում սկսվել էր 1930-ական թվականներին, երբ Ստամբուլի Կենտրոնական, Մխիթարյան, Պեղճյան և այլ դպրոցներն ավարտած մի քանի երիտասարդներ փորձեցին վերջ տալ գրական լճացմանը: Նոր սերունդը նկատելի հակում ցույց տվեց դեպի ռեալիզմը, որոնելով նյութի մատուցման նոր ձևեր: Գրական ձևերից նախընտրելին պատմվածքը դարձավ:

Այդ գրողները, դժբախտաբար, չունենալով հարատևող մի օրգան, հար-

կադրված էին աշխատակցելու տարբեր պարբերականների, տեղի տալով յուրաքանչյուրի պահանջներին ու նախասիրություններին:

Գրական այդ շարժումը նոր որակ ստացավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ լույս տեսան դեմոկրատական ուղղության մի քանի նոր պարբերականներ: Նրանց էջերում տպագրվեցին արձակ և չափածո բաղմամբիվ երկեր, որոնք մի տեսակ թարմություն էին մտցնում պոլսահայ լեռնյա մթնոլորտում:

Նոր մտայնությունը արտահայտող գրողներից են Խ. Ամիրյանը, Հ. Գալուստյանը, Վ. Գարակյոզյանը և ուրիշներ: Հիշատակության արժանի են Հ. Գալուստյանի «Գործիս ճամփուն վրա», Վ. Գարակյոզյանի «Իմ Մասիս» և «Զույգ աչքերես», Խ. Ամիրյանի «Ծրագիր սիրո և պայքարի» և այլ չափածո ժողովածուները:

Արձակից հիշատակության արժանի են՝ Զ. Պիպեոյանի, Ատրինե Տատուրյանի և Վ. Աճեմյանի գործերը:

1940-ական թվականների կեսերից գերազանցապես որպես հրապարակախոս հանդես եկող Զ. Պիպեոյանը մեկ տասնամյակ անց արդեն ճանաչված գրող էր ոչ միայն պոլսահայ միջավայրում, այլև դրանից դուրս: Նա գրել է պատմվածքներ, վեպեր, ինչպես՝ «Լկրտածք» և «Անկուտի սիրահարները»: Նրա պատմվածքներն ամփոփվել են «Ծովը» վերնագիրը կրող ժողովածույում (1961): Զ. Պիպեոյանը ուժեղ է հատկապես պատմվածքներում, որոնց բնորոշ կողմը շեշտված առաջադիմական գաղափարախոսությունն է, իր միջավայրի մարդկանց՝ օրվա ապրուստի համար մղած պայքարի ցուցադրումը, որ հեղինակը հաճախ կատարում է մեծ արվեստով:

Պոլսահայ նոր սերնդի գրողներից է Վ. Աճեմյանը: 1944 թվականին նա լույս է ընծայել ժամանակակից կյանքի թեմաներով գրված պատմվածքների «Քովնտի փողոց» ընդհանուր վերնագրով: Աճեմյանը չի սիրում նկարագրել հոգեբանական սուր բախումներ, արտառոց դեպքեր: Նա կյանքը ներկայացնում է այնպես, ինչպես տեսնում է: Հակոբ Պարոնյանի հետևողությամբ նա գրել է իր միջավայրի գրական դեմքերից մի քանիսի երգիծական դիմանկարները, որոնք, սակայն, թույլ գործեր են:

Ատրինե Տատուրյանը գրում է արձակ, չափածո և դրամատիկական ստեղծագործություններ: 1937 թվականին «Նոր լուր» օրաթերթում որպես թերթոն տպագրած «Հայրը» վեպից հետո, նա ունեցել է գրական նկատելի աճ: Վերջին տասնամյակների նրա արձակ ստեղծագործությունները որոշակի գրական արժեք են ներկայացնում, ինչպես «Մայթերու վրա» գիրքը: Ունի նաև մանկական մի շարք գործեր («Անիին գանձանակը», «Գողցված աղջիկը» և «Կույր աղջկան ընկերը»): 1954 թվականին հրատարակել է «Այսպես մեծցան անոնք» պիեսը:

1930-ական թվականների սկզբներից ծնունդ առած արևմտահայ գրական այս նոր շարժումը, որն ունեցել էր զարգացման զիգագներ և 1945 թվականին թևակոխել մի նոր փուլ, շարունակվեց մոտ մեկ հնգամյակ, երբ Թուրքիայում տեղի ունեցած քաղաքական նոր իրադարձությունների հետևանքով ծայր առան գրաքննական խստությունները: Գրեթե կասեցվեց մի քանի տարի առաջ վերսկսված պոռթկումը: Դադարեցին առաջադիմական թերթերը:

Հարկ է նշել, որ պոլսահայ գրականության բնորոշ առանձնահատկությունը հայրենասիրության գրեթե բացակայությունն է, որն արդյունք է գլխավորապես քաղաքական հետապնդումների: Ահա թե ինչու պոլսահայ բանաստեղծների քնարի հայրենասիրական լարը չգոյությունն աստիճան թույլ է: Բայց այն, ինչ կատարվեց 1945—1946 թվականներին, վկայում է, որ հայրենասիրական զգացումը վառ է պոլսահայ երիտասարդության մեջ նաև այսօր և նպաստավոր պայմաններում կարող է իր արտահայտությունը գտնել գրականության մեջ:

Հայազգի գրողներից ոմանք ստեղծագործում են օտար լեզուներով: Դրանցից ամենանշանավորը Վիլյամ Սարոյանն է, որն արժանացել է համաշխարհային ճանաչման: Նա ծնվել է Ամերիկայում, Բիթլիսից դաղթած ընտանիքում, խոսել մայրենի լեզվով, բայց ստանալով ամերիկյան կրթություն, սկսել է գրել անգլերեն: Առաջին պատմվածքը փորձել է տպագրել հայ մամուլում, սակայն մեծ տաղանդը հեղինակին դուրս բերեց անձուկ շրջանակներից: Նա թափանցել է ամերիկյան մամուլի էջերը, սիրվել է, տպագրվել, թարգմանվել, դարձել աշխարհի ամենասիրված գրողներից մեկը: Հոգով մնացել է հայ, ինչի մասին էլ որ գրել է, զգացնել է տվել իր ազգային պատկանելությունը, ընտրել է հայ հերոսներ, հաճախ՝ հայկական միջավայր:

Այլ խառնվածքի ու նախասիրության գրող է Լևոն Սյուրմեյանը: Նա սկսել է գրել հայերեն, տպագրվել հայ մամուլում: Մի ամբողջ տասնամյակ մնաց հայ գրականության սիրված դեմքերից, ի վերջո շրջանակները նեղ դարձան նաև նրա համար: Նա նույնպես սկսեց գրել անգլերեն: Լ. Սյուրմեյանի գործերը տպագրվեցին այնպիսի թերթերում ու հանդեսներում, որոնք ունեին մեծ տպաքանակ: Նա դարձյալ մնաց հայ, նույնքան, որքան Սարոյանը, բայց սփյուռքահայ գրականության հետ նրա առնչությունը սահմանափակվում է մի փոքրիկ հատորով, գրված հայերեն, տպագրված Փարիզում «Լույս զվարթ» վերնագրով: Վերջին երեք տասնամյակում Լ. Սյուրմեյանը ստեղծագործում է անգլերեն: Այնուամենայնիվ նա իր ժողովրդի հետ հոգեկան ամուր կապի մեջ է: Դրա լավագույն արտահայտությունն է «Սասնա ծռեր» էպոսի նրա կատարած անգլերեն հիանալի թարգմանությունը:

Ֆրանսերեն գրող հայազգի բանաստեղծների ու արձակագիրների թիվը ավելի մեծ է՝ Մերութան Պարսամյան (Ժան Մերու), Շահան Շահնուր (Արմեն Լյուպեն), Վահրամ Կաթավյան (Վիկտոր Գորդոն), Վահե Քաչա (Խաչատուրյան) և ուրիշներ:

* *
*

Սփյուռքահայ պատմագրությունը կարելի է բաժանել երկու մասի՝ հայ ժողովրդի պատմության առանձին դրվագների շարադրանքի փորձեր և հայրենակցական պատմագրություն:

Բնորոշ է, որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում սփյուռքում չի եղել որևէ պատմաբան, որ նպատակ ունենար գիտական անհրաժեշտ խորությամբ տալ հայ ժողովրդի ամբողջական պատմությունը: Ն. Ադոնցը հայ

և օտար հանդեսներում տպագրել է բազմաթիվ հոդվածներ՝ նվիրված հայ ժողովրդի պատմության առանձին դրվագներին: Հետագայում այդ հոդվածներից կարևորներն ամփոփվեցին «Պատմական ուսումնասիրություններ» (Փարիզ, 1948) ժողովածուում, երբ հրապարակի վրա էր նաև հեղինակի ֆրանսերեն մի այլ աշխատությունը Հայաստանի հնագույն շրջանի մասին:

Նույնատեղանքի շրջանում լույս են տեսել հայ ժողովրդի պատմությանը նվիրված մի շարք աշխատություններ, որոնց նպատակը համեստ է՝ նոր սերնդին իրազեկ պահել հայ ժողովրդի անցյալի հիշարժան դրվագներին:

Ստեղծվել է հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջաններին կամ հարցերին վերաբերող բավականաչափ մեծ գրականություն:

Սփյուռքահայ պատմաբաններից հիշատակության արժանի է Հրանտ Արմենը, որն ապրում և ստեղծագործում է Ամերիկայում: Մամուլում տպագրվել են նրա բազմաթիվ հոդվածները հայ ժողովրդի պատմության վաղ շրջանի վերաբերյալ: 1940 թվականին անգլերեն լեզվով հրատարակվեց Հ. Արմենի «Մեծն Տիգրան» աշխատությունը, որի հայերեն թարգմանությունը տպագրվեց Կահիրեում 1957 թվականին: Առավել ուշագրավ է նրա «Մարզպանը և Սպարապետը» հետազոտությունը (Լոս-Անջելոս, 1952): Նրանում քննության է առնվում հայ պատմագրությանը երկար տասնամյակներ զբաղեցրած վասակի և Վարդանի գնահատման հարցը: Հեղինակը կանգնած է վասակի վարքածի արդարացման տեսակետի վրա: Տարիներ առաջ այդ հարցը հատուկ աշխատության մեջ քննության էր առել Ն. Ադոնցը, որը փորձել էր ցույց տալ Նզդիշի վերաբերմունքի միակողմանիությունը:

Այս գիրքը սփյուռքահայ մամուլում առաջացրեց աղմուկ, համարվեց սրբապղծություն Ավարայրի ճակատամարտի դյուցազուն Վարդանի նկատմամբ: Հեղինակը հարկադրված եղավ ընդդիմախոսներին պատասխանել «Քննադատները զայրացած են» գրքուկով, որտեղ շարունակում էր արդարացնել իր տեսակետները, ցույց տալով, որ պատմական երևույթները դժվար է հասկանալ զգացմունքային թելադրանքով:

Հ. Արմենը հետագայում տպագրեց նոր աշխատություններ, ինչպես «Պասյ Արշակունի» և «Փառանձեմ թագուհի»:

Պատմագրության բնագավառում բեղմնավոր աշխատանք կատարեց Արշակ Ալպոյաճյանը: Նա վերջին երեք տասնամյակների ընթացքում հրատարակել է տասից ավելի ստվարածավալ երկեր: Դրանց մեջ արժեքավոր է հատկապես «Պատմություն հայ գաղթականության» բազմահատոր ուսումնասիրությունը (Ա. հատոր, Կահիրե, 1941, Բ. հատոր, 1955, Գ. հատոր, մաս Ա, 1961):

Ա. Ալպոյաճյանը պատմական երևույթների մեկնաբանման մեջ հաճախ խուսափում է սոցիալ-տնտեսական շարժառիթների քննությունից, սակայն գաղթականության պատմության երեք հատորները երկար տարիների քրտնաջան աշխատանքի արդյունք են:

Ա. Ալպոյաճյանը 1960 թվականին հրատարակեց մի ծավալուն հետազոտություն՝ նվիրված եգիպտահայ գաղութի պատմությանը: Հեղինակն օգտա-

¹ Տե՛ս Histoire d'Arménie, Paris, 1946.

գործել է եվրոպական և արաբական բազմաթիվ աղբյուրներ ու նոր փաստեր, որոնք հայտնի չեն եղել մեր պատմագրությանը:

Բացի վերոհիշյալ պատմագրական աշխատություններից Ա. Ալպոյաճյանը գրել է հայկական մի քանի գաղթօջախների պատմությունը, որոնք առանձին գրքերով լույս են տեսել տարբեր երկրներում:

Կարևոր նյութեր են պարունակում հայրենակցական առանձին հրատարակությունները: Սկսած 1920-ական թվականների վերջերից, լույս են տեսել մի քանի տասնյակ այդպիսի գրքեր:

1929 թվականին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում լույս տեսավ երկարամյա մանկավարժ, Վանի հայտնի Երամյան վարժարանի հիմնադիր Համբարձում Երամյանի «Հուշարձան Վան Վասպուրականի» երկհատոր աշխատությունը: 1932 թվականին Կահիրեում տպագրվեց Հարություն Սարգսյանի «Քալուն»։ Հետագայում, տարբեր երկրներում, լույս տեսան Գրիգոր Գալուստյանի «Մարաշ կամ Գերմանիկը» (Նյու-Յորք, 1937), Ա. Ալպոյաճյանի՝ «Պատմություն հայ Կեսարիո» երկհատորը (Կահիրե, 1937), Գրիգոր Մխալյանի՝ «Պարտիզակն ու պարտիզակցին» (Կահիրե, 1938) և այլ աշխատություններ:

Հայրենակցական պատմագրությունը լայն ծավալ ստացավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այդ ժամանակաշրջանում տպագրված գրքերի թիվը հասնում է մոտ հարյուրի: Կարելի է հիշատակել դրանցից մի քանիսը. Հ. Պողոսյան՝ «Հաճնի ընդհանուր պատմությունը» (Լոս-Անջելոս, 1942), Գ. Սուրմենյան՝ «Երզնկա» (Կահիրե, 1947), Մ. Պարսամյան՝ «Ակն ու ակնցիք» (Փարիզ, 1952), Ա. Ալպոյաճյան՝ «Պատմություն Եվդոկիո հայոց» (Կահիրե, 1952), Տ. Մկունդ՝ «Ամիտայի արձագանքները» (Ա և Բ հատորներ, Նյու-Յորք, 1950, 1952), Կ. Գալֆայան՝ «Գիրք ելից հայոց» (Բեյրութ, 1955), Արամ Սահակյան՝ «Ելուցադնական Ուրֆան» (Բեյրութ, 1955), Վահե Հայկ՝ «Խարբերդ և անոր ոսկեդեն դաշտը» (Նյու-Յորք, 1959), Ղազար Չարբդ՝ «Կարինապատում» (Բեյրութ, 1957), Ա. Ալպոյաճյան՝ «Պատմություն Մալաթիո հայոց», «Հուշամատյան կոտորնահայերու» (Բեյրութ, 1961) և այլն:

Ստվարածավալ հատորներ են լույս տեսել նաև տարբեր վայրերի հայ բնակչության մասին, ինչպես՝ Արտավազդ Սուրմենյանի եռահատոր «Պատմություն Հալեպի հայոց»-ը, «Այնթափի պատմությունը» և այլն:

Թվարկված բոլոր աշխատությունները համարյա շարադրված են նույն սկզբունքով: Հեղինակները կամ կազմողները տվյալ քաղաքի կամ վայրի պատմությունը ներկայացնում են խոր անցյալից սկսած: Խոսում են այդ քաղաքի կամ երկրի կլիմայի, աշխարհագրության, տեղագրության, բուսական ու կենդանական աշխարհի, քաղաքական կարևոր իրադարձությունների և այլ հարցերի մասին: Այդ մանրամասն ներկայացնում են հայ ժողովրդի վիճակը տարբեր տիրապետությունների գերիշխանության տակ, մեծ տեղ հատկացնելով XIX դարին: Լայնորեն արվում է հայերի դպրոցական, լուսավորական, մտավորական կյանքը, խոսվում է մամուլի, գրականության, թատրոնի և այլ բնագավառների մասին: Փոքրիկ դիմանկարներով ներկայացվում են հասարակական-քաղաքական, մշակութային գործիչները: Այնուհետև նկարագրվում է բնակչության ճակատագիրը համաշխարհային առաջին պատե-

րազմի ծանր օրերին, հայրենակիցների ցրվելը աշխարհով մեկ, նրանց վիճակը տարբեր երկրներում: Որոշ աշխատություններում մեծ տեղ է տրվում հին մշակույթին, գեղարվեստական ստեղծագործություններին: Այդ գրքերի որոշ մասի մեջ գետնի վրա են ժողովրդական բանահյուսության նմուշներ՝ հեքիաթներ, ծիսակատարություններ, ազգագրական նյութեր և այլն:

Ընդհանրությունների հետ մեկտեղ, այդ գրքերը միմյանցից տարբերվում են քաղաքական միտումներով: Որոշ հեղինակներ մոտավոր անցյալի շատ հարցեր մեկնաբանում են ազգայնական գաղափարախոսության տեսանկյունից, ինչպես Ղ. Չարբեր, Գ. Սուրմենյանը և ուրիշներ:

Հայրենակցական միությունների հրատարակած գրքերը հարուստ նյութ են պարունակում հայ ժողովրդի պատմությունն ուսումնասիրողների համար: Այդ տեսակետից առավել արժեքավոր են Հ. Գալուստյանի «Մարաշը», Ա. Ալպոյաճյանի «Պատմություն հայ Կեսարիո», «Պատմություն Եվդոկիո հայոցը» և այլ գործեր:

3. ԱՐՎԵՍՏԸ

Նոստալոգիայի ժամանակաշրջանում սփյուռքահայ թատրոնը, երաժշտությունը, նկարչությունն ու քանդակագործությունը նկատելի թուլացում ապրեցին:

Թատրոնի համար բնորոշը պրոֆեսիոնալիզմից աստիճանաբար սիրողական ներկայացումներին անցնելն է: 1920—1930-ական թվականներին կանոնավոր թատերախմբեր են գործել Թուրքիայում, Ֆրանսիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Եգիպտոսում և այլ երկրներում: Այժմ ամբողջ սիյուլոքում կա երկու-երեք թատերախումբ, որոնք գործում են կիբանանում («Գասպար Իփեկյան», «Վահրամ Փափազյան» և այլն): Առաջինը գործում է երկար տարիներ ի վեր, իր խաղացանկում տեղ տալով ինչպես հայ հեղինակներին (Հ. Պարոնյան, Ա. Շիրվանդյան, Գ. Սունդուկյան, Լ. Շանթ և այլն), այնպես էլ համաշխարհային գրողներին: Այդ թատերախումբը շրջագայել է տարբեր երկրներ, ներկայացումներ է տվել Սիրիայում, Եգիպտոսում, Իրանում և այլուր:

Բեյրութում ստեղծվեց նաև «Վահրամ Փափազյան» թատերախումբը, որը ղեկավարում է Ստամբուլում թատերական նկատելի գործունեությամբ հայտնի ռեժիսոր Պերճ Ֆազլյանը: Չնայած իր գոյության կարճ ժամանակամիջոցին, այս թատերախումբը նկատելի գործ է կատարում ստեղծագործական ուժերի համախմբման, կայուն խաղացանկի ստեղծման ուղղությամբ: Նա ավելի մոտ է կանգնած հայրենիքի մշակույթին: Բեյրութահայ հասարակայնությունը ջերմ վերաբերմունք ունի դեպի այս երիտասարդ թատերախմբի գործունեությունը:

Թատերական կյանքը մյուս գաղթօջախներում չի դրված կայուն հիմքերի վրա. բացառապես գործում են սիրողական խմբեր, որոնք տալիս են սլատահական ներկայացումներ: Թատերական գործի ղեկավարությունն ընդհանուր առմամբ իրենց վրա են վերցնում հին սերնդի որոշ ներկայացուցիչներ:

Հիշատակության արժանի են մնայուն թատրոն ստեղծելու փորձերը Ստամբուլում, մի քաղաքում, որը եղել է հայ թատերական շարժման ամենախոշոր կենտրոններից մեկը և տվել բեմական տասնյակ շողշողուն աստղեր՝ Պետրոս Ադամյան, Սիրանուշ, Աղնիվ Հրաչյա, Վահրամ Փափազյան, Արուս Ոսկանյան, Հրաչյա Ներսիսյան և ուրիշներ։ Երկար տարիների խստագույն արգելքից հետո, 1945 թվականից Թուրքիայում որոշ հնարավորություններ էին ստեղծվել աղգային փոքրամասնությունների մշակութային կյանքի աշխուժացման համար։ Թույլատրվել էին նաև հայկական ներկայացումները։ Ստեղծվում են թատերախմբեր և ներկայացումներ տրվում։ Դրանցից էին «Մխիթարյան Սանուց», «Կեդրոնական Սանուց», «Սկյուտարի Սանուց» և այլ թատերախմբերը։

Զնայած այդ թատերախմբերը, ինչպես և մի քանի այլ խմբեր («Երիտասարդաց թատերախումբը», «Մնական թատերախումբը» և այլն), գրեթե կազմված էին սիրող դերասաններից, այնուամենայնիվ նրանք նշանակալից դեր կատարեցին մեծած թատերական կյանքի վերակենդանացման գործում։ Ռեժիսոր, խմբավար Աշոտ Մատթևյանը իր ստուգիայով փորձեց թատերական շարժումը դնել պրոֆեսիոնալ հիմքերի վրա։

Պոլսահայ հանդիսականը նորից հնարավորություն ստացավ բեմից լսելու բաղձալի մայրենի լեզուն, դիտելու Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները», Ալ. Շիրվանզադեի «Նամուսը», «Պատվի համարը», Լ. Շանթի «Հին աստվածները» և տեղական բարձրը ցուցադրող մի քանի այլ պիեսներ։

Արդեն առաջացել էին Ստամբուլում նորից հայկական պրոֆեսիոնալ թատրոն ստեղծելու որոշ պայմաններ։ Սակայն թուրքական կառավարության կողմից վերստին գործադրվող արգելքները աստիճանաբար մարեցին հայրենասեր երիտասարդների խանդավառ ոգին, թուլացրին շարժումը, ցրեցին թատերախմբերից շատերը, ստիպեցին խոստումնալից ուժերին, ինչպես Պերճ Ֆալլյանին և մյուսներին, հեռանալ Թուրքիայից։

1940-ական թվականների կեսերից կայուն թատերախմբեր կազմելու փորձեր կատարվեցին նաև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Բալկաններում և այլ երկրներում։ Սակայն բոլորն էլ մատնվեցին անհաջողության։ Եթե Թուրքիայում ձախողման պատճառը քաղաքական խստություններն էին, ապա մյուս գաղթօջախներում՝ մեծ մասամբ հանդիսականի բացակայությունը։ Այսպես, պատերազմի ավարտից հետո վերականգնված փարիզահայ թատրոնը հաղիվ կարողացավ երեք տարի պահել իր գոյությունը և քայքայվեց, որովհետև, ինչպիսի գրեթե փարիզահայ մամուլը, տոմս վաճառելը դարձել էր ողորմություն խնդրելու նման մի բան։ Այդպես էր դրուժյունը նաև մյուս գաղթօջախներում։

Հայ թատրոնի աստիճանական քայքայման այս իրադրության մեջ հետըզհետև անհետացան նրա զարդը կազմող ուժերը, սփյուռքահայ բեմը թողնելով ամալության մեջ։

Սփյուռքահայ երաժշտական արվեստը զարգանում է երկու տարբեր ուղիությունների առկայության պայմաններում։ Մի կողմից՝ շատ հայ երգահաններ, մեծ մասամբ Կոմիտասի աշակերտները և վերջիններիս սաները, ստեղծագործում են՝ հավատարիմ մնալով աղգային երաժշտության ավանդներին, ներշնչման աղբյուր ունենալով հայկական ժողովրդական երգարվես-

տը, մյուս կողմից՝ օտար դաստիարակությամբ կյանք մտած հայ արվեստագետները հիմնականում ստեղծագործում են եվրոպական երաժշտության աղ-դեցության ներքո, հազվադեպ դիմելով մայր ժողովրդի երաժշտությանը:

Ազգային երաժշտության զարգացման, ժողովրդական երգերի հավաքման ու մշակման գործում նկատելի դեր են կատարել Կոմիտասի աշակերտներից Մ. Թումաճյանը, Վ. Սրվանձտյանցը, Բ. Կանաչյանը, Վ. Սարգսյանը, Մ. Բաբայանը և ուրիշներ: Ապրելով և ստեղծագործելով տարբեր երկրներում, նրանք ծառայում են միևնույն նպատակի: Սրանցից Մ. Թումաճյանը, բացի ինքնուրույն մի շարք ստեղծագործություններից, ժողովրդական երգերի մշակումից, խմբավարական գործունեությունից, տարիների քրտնաջան աշխատանքով հավաքել ու ձայնագրել է հայ ժողովրդական ու ազգային հայրենասիրական մոտ երկու հազար երգ, որոնք հանձնել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտին: Վ. Սարգսյանը և Մ. Բաբայանը խոշոր դեր են կատարել Կոմիտասի անտիպ ստեղծագործությունների հավաքման ու հրատարակման գործում, կատարել են ժողովրդական երգերի մշակումներ: Մասնավորապես Մ. Բաբայանը ունեցել է բեղմնավոր գործունեություն: Նրա կազմակերպած ստուդիայում երաժշտական կրթություն են ստացել բազմաթիվ հայեր: Նա Ֆրանսիայում պրոպագանդել է հայ երաժշտական արվեստը, Հայաստան է ուղարկել Կոմիտասի շատ ստեղծագործությունների ձեռագրեր, նամականի և այլ փաստաթղթեր:

Որպես երգահան և խմբավար-դիրիժորներ սփյուռքում հայտնի են Համբարձում Պերբերյանը, Աշոտ Պատմագրյանը, Արա Պարթևյանը, Գուրգեն Ալեմշահը, Օննիկ Պերբերյանը և ուրիշներ: Նրանց ներշնչման աղբյուրն է հայ ժողովրդական երաժշտությունը: Ա. Պատմագրյանը ավելի քան քառասուն տարի ղեկավարում է երգչախմբեր, համերգներ տալիս սփյուռքահայ գաղթօջախներում: Նա գրել է բազմաթիվ մեներգեր, խմբերգեր, որոնք լայն ժողովրդականություն են վայելում: Օննիկ Պերբերյանի նախասիրությունը սիմֆոնիկ երաժշտությունն է: Նրա գրչին են պատկանում «Հայկական սիմֆոնիան», «Հայկական պատարագը», «Հայրենիք»-ը և այլն:

Արաբկիրի, Տարոնի և պատմական Հայաստանի այլ գավառների ժողովրդական շատ երգեր է ձայնագրել ու մշակել Ավետիս Մեսումենցը, որ նույնպես ապրում է Ֆրանսիայում:

Իրանահայ երաժշտական կյանքում նկատելի դեր է կատարել Նիկոլ Գուլանտերյանը՝ թե՛ որպես ստեղծագործող և թե՛ որպես խմբավար: Նրա երգերից շատերը լայնորեն կատարվում են ոչ միայն սփյուռքում, այլև Սովետական Հայաստանում:

Սփյուռքի գրեթե բոլոր գաղթօջախներում այսօր հայ երգը հնչում է լիաթոք և նպաստում ազգասպահպանման մեծ գործին: Դրանում նկատելի դեր են կատարում ամենուր գործող հայկական երգչախմբերը, որոնք մեծ մասամբ կատարում են հայ ժողովրդական երգեր և հայ հնդկականների ստեղծագործություններ: Այդպիսի երգչախմբեր կան Ամերիկայում, Նգիպտոսում, Բուլղարիայում, Իրանում, Լիբանանում, Թուրքիայում և այլուր: Այդ երգչախմբերը հիմնականում ղեկավարվում են վերևում հիշատակված ստեղծագործողների կողմից: Հիշատակության արժանի է նաև Սարգիս Պալթայանը, որը մեծ գործ

է կատարում բուլղարահայ երաժշտական կյանքում: Նա ղեկավարում է Պլուդիվի «Արամ խաչատրյան» հայկական երգչախումբը:

Հեռավոր Արգենտինայում գործում է «Հայ երաժշտության բարեկամների միությունը», որի երգչախումբը ղեկավարում է Ժան Ալմուխյանը: Հետեւելով հանդերձ արտասահմանյան արդիական արվեստի ոճին, նա աստիճանաբար թեքվում է դեպի ազգայինը: Այդ են վկայում նրա «Հայկական սյուիտը», դաշնամուրի և կլարնետի համար գրած սոնատը և այլն:

Հարկ է նշել, որ ինչպես բոլոր հայ ստեղծագործողները, այնպես էլ երգահանները աշխատում են դժվարին պայմաններում:

Բնորոշ է, որ հայ երգարվեստը լայն տարածում է գտնում հատկապես այն գաղթօջախներում, որոնք ունեն հայկական հոգևոր կյանքով ապրելու և մայր հայրենիքի հետ կապ պահպանելու հնարավորություն: Այսպես, լիբանանահայ գաղութում այն անհամեմատ կենսունակ է: Արաբական երկրների և հայրենիքի հետ կենդանի կապի ամրապնդմանը մեծապես նպաստեց Սովետական Հայաստանի ստեղծագործական ուժերի այցը Բեյրութ, Հալեպ, Կահիրե և այլ քաղաքներ: Կարևոր նշանակություն ունեցան մասնավորապես Սովետական Հայաստանի երգի-պարի անսամբլի ելույթները այդ երկրներում: Հայ և օտար մամուլը ողողվեց դրվատական հոդվածներով: Անսամբլը մեծ ազդեցություն թողեց հայ կյանքի վրա: Նրա օրինակով Բեյրութում ստեղծվեց երգի-պարի անսամբլ: Որոշ արվեստագետներ, կատարելագործվելով Հայաստանում, շարունակում են ծառայել հայ երաժշտության զարգացման գործին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո երաժշտական կյանքի եռուղեռ նկատվեց նաև Ստամբուլում: Այստեղ օգտակար մեծ աշխատանք են կատարել Բ. Կանաչյանը, դաշնակահարուհի Գոհարիկ Ղազարոսյանը, դիրիժոր Հովհաննես Զեքիջյանը և ուրիշներ: Երգչախմբեր ստեղծվեցին Սանուց միություններին կից: Դրանցից մեկը ղեկավարում էր խմբավար Տիգրան Մամիկոնյանը: Սանուց միությունների մի մեծ խումբ ղեկավարում էր Հովհաննես Զեքիջյանը, որը չկարողանալով տոկալ հեղձուցիչ մթնոլորտին, վերադարձավ Սովետական Հայաստան և հնարավորություն ստացավ ցուցադրելու իր տաղանդը:

Չնայած բազմաթիվ դժվարություններին, հայկական երաժշտությունը սփյուռքում զարգանում է ազգային ավանդների պահպանման ճանապարհով:

Ինչպես թատրոնի ու երաժշտության, այնպես էլ նկարչության ու քանդակագործության վրա նկատելի հետք թողեց սերունդների հերթափոխը: Երեսնական թվականներին Եվրոպայում ու Ամերիկայում ստեղծագործում էին մեկ տասնյակից ավելի հայ նկարիչներ, քանդակագործներ, որոնցից շատերը, ինչպես էդգար Շահինը, Հ. Գյուրջյանը, Տիգրան Փուլատյանը, ճանաչված էին օտար շրջաններում: Պատերազմից հետո աստիճանաբար նոսրացան հայ արվեստագետների շարքերը: 1947 թվականին մահացան նկարիչներ Արշակ Ֆեթվաճյանը, Սարգիս խաչատրյանը, Կարապետ Աղամյանը, էդգար Շահինը, քանդակագործ Մորիս Սարգիսովը: Հաջորդ թվականին մահացավ հայտնի քանդակագործ Հակոբ Գյուրջյանը, մի տարի անց՝ նկարիչ Տիգրան Փուլատը: Վերջինս նկարազարդել է ֆրանսիական վեպեր, վիպակներ:

Հիշատակության արժանի դեմք է ժիրայր Օրագյանը, որը ապրում և ստեղծագործում էր Իտալիայում: Նրա ստեղծագործություններում հայ կյանքը առկա է ոչ միայն այն նկարներում, որոնց նյութը հայերն են («Որբեր», «Եղեռներ» և այլն), այլև անգամ այն կտավներում, որոնք, թվում է, թե ունեն համամարդկային առանցք («Վիշտը», «Թշվառները», «Վշտակիցները» և այլն)։

Նախորդ տասնամյակներից եկող արվեստագետների թիվը այժմ շատ սահմանափակ է:

Սփյուռքահայ գաղթօջախներում ասպարեզ են եկել մի քանի տասնյակ երիտասարդ նկարիչներ, որոնք հետևում են Արևմուտքի ժամանակակից արվեստի տարբեր ուղղությունների: Հիշատակության արժանի են Արիել Աճեմյանը, Մանվել Թովեգյանը (ԱՄՆ), Զարեհ Մուսաֆյանը, Ժանսեմը (Սեմերճյան), Արտավազդ Պերպերյանը (Ֆրանսիա), քանդակագործուհի Նվարդ Զարյանը (Իտալիա) և ուրիշներ:

Անժ թվով հայ նկարիչներ ապրում են Եգիպտոսում: Իրենց ստեղծագործությունները նրանք պարբերաբար ցուցադրում են ցուցահանդեսներում (Օննիկ Ավետիսյան, Աշոտ Զորյան, Սիմոն Սամսոնյան և ուրիշներ): Աշոտ Զորյանը զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ: Նրա արվեստանոցում սովորել են շատ երիտասարդներ: Օննիկ Ավետիսյանը և՛ նկարիչ է, և՛ քանդակագործ: Նրա ստեղծագործությունները ցուցադրվել են Եգիպտոսում, Լոս-Անջելոսում, Բուխարեստում և այլ քաղաքներում: Օ. Ավետիսյանը նաև արվեստի պատմաբան է: Նա գրել է «Հայկական նկարչությունն ու քանդակագործությունը» խորագրով սովոր աշխատությունը Ֆրանսերեն¹:

Իր արվեստով, հասարակական գործունեությամբ ամենից առավել հայ կյանքի հետ կապված արվեստագետներից է ծաղրանկարիչ Ալ. Սարուխանը: Ետպատերազմյան ժամանակաշրջանի իր ծաղրանկարներում նա շարունակում էր արտացոլել եգիպտահայ կյանքը: 1962 թվականին Կահիրեում լույս տեսավ Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները»՝ Ալ. Սարուխանի տաղանդավոր նկարազարդումներով: Նույն թվականին նկարիչը լույս ընծայեց եգիպտահայ կյանքը պատկերող 200 երգիծանկար՝ «Մենք մեր ակնոցով» ընդհանուր վերնագրով, ինչպես և հայերեն բազմաթիվ ասացվածքներ՝ ծաղրանկարներով:

Իրանում նույնպես բնակվում են մի շարք շնորհալի հայ նկարիչներ: Հայկական կյանքի հետ սերտորեն կապված արվեստագետներ են Դևը, Հարություն Մինասյանը, Մարգո Գրիգորյանը և ուրիշներ: Առավել հռչակված են Դարվիշը (Անտրե Սևրուկյան) և Աբրահամ Գուրգենյանը: Երկուսն էլ ծնվել են Իրանում, հետեւ պարսկական մանրանկարչական արվեստին, դարձել այդ բնագավառի ականավոր դեմքեր: Դարվիշը Իրանում ապրելու տարիներին նկարազարդել է «Շահնամեն»: Հետագայում բնակություն հաստատելով Շտուտգարդում, նա ձեռնամուխ է եղել Օմար Խայամի քառյակների նկարազարդմանը, հռչակվելով ամբողջ եվրոպայում: Անգլերեն հրատարակության

¹ Onnig Avédissian—Peintres et sculpteurs Arméniens. Le Caire, 1959.

համար նրա կատարած նկարազարդումներով լույս է տեսել Օմար խայամի հայերեն թարգմանության մի հրատարակություն¹:

Աբրահամ Գուրգենյանը իր մասնագիտական ուսումնասիրությունը սկսել է պարսկական հին ձեռագրերի հետազոտությունից, նկարազարդել է Օմար խայամի քառյակները, Հաֆիզի, Սայադիի բանաստեղծությունները և աստիճանաբար անցել հայկական կյանքին: 1946 թվականին Թեհրանում, նրա անդրանիկ ցուցահանդեսում ցուցադրվել են Նահապետ Քուչակի, իսկ 1950 թվականի ցուցահանդեսում՝ Սայաթ-Նովայի, Հովհաննես Թումանյանի, Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների հիանալի նկարազարդումները: Նա նկարազարդել է Թադևոս Հովնանյանի «Նոր Զուղայի պատմությունը» գիրքը, ստեղծել «Ազդարարի» խմբագիր Հարություն Շմավոնյանի ու այլոց դիմանկարները և կենցաղային մի քանի նկարներ, ընդօրինակել է պատմական և դեղարվեստական արժեք ներկայացնող հայկական տապանաքարեր, նկարներ, տարադներ, ստեղծելով 450 թեթից բաղկացած հարուստ մի հավաքածու, որը ցուցադրվել է Երևանում 1958 թվականին:

Ճարտարապետությունը, իբրև հայ արվեստի ուրույն ճյուղերից մեկը, սփյուռքում գոյություն չունի: Հայ ճարտարապետները ստեղծագործում են օտար հողի վրա, առաջնորդվելով տվյալ երկրի պահանջներով: Երբևէ միայն նրանք պատվեր են ստանում նախագծելու հայկական դպրոց, եկեղեցի: Այս դեպքում դիմում են ազգային ոճին, հաշվի առնում հայկական ճարտարապետության սկզբունքները:

Եգիպտոսում երկար տասնամյակներ գործել է ճարտարապետ Կարո Պալյանը, որը, ի դեպ, գրել է նաև եգիպտական ճարտարապետության պատմությունը:

Ինչպես գրականության մեջ, արվեստի բնագավառում ևս մի քանի դեմքեր, դուրս գալով հայկական շրջանակներից, հասել են համաշխարհային ճանաչման: Դրանցից է, օրինակ, Շառլ Աղնավուրը՝ խոշոր տաղանդի տեր մի արվեստագետ: Նա ծնվել է հայ թատրոնին ծառայող ընտանիքում, հայրը՝ դերասան, մայրը՝ դերասանուհի, մանկուց լսել է հայ երգն ու երաժշտությունը, լսել Սայաթ-Նովայի երգերը: Շ. Աղնավուրը աշխարհում հայտնի է որպես Ֆրանսիացի երգիչ, չնայած նրա երգարվեստում իրեն զգացնել է տալիս հայկական մեղեդին: Լուսին Ամարան նույնպես հռչակված և ճանաչված է ամբողջ աշխարհում: Տարբեր լեզուներով հարյուրավոր թերթեր և պարբերականներ գովերգել են Լ. Ամարայի տաղանդը: Հայ է, ծնված հայ ընտանիքում (Արմաղանյան), խոսում է հայերեն, սիրում է իր ժողովրդին, բայց նրա արվեստը պատկանում է ամերիկյան երաժշտությանը:

Համընդհանուր ճանաչման են արժանացել նաև օպերային աստղեր Լիլի Զուգասդյանը (Նյու-Յորք), Լին Դուրյանը (Փարիզ), Կարպիս Զորյանը (Բուդապեշտ), Դավիդ Հովհաննիսյանը (Ռումինիա), էստրադային երգիչներ Մարկ Արյանը (Հարություն Մարկարյան), Ռոզի Արմենը և ուրիշներ:

¹ Օմար խայամ, Տաղաչափեց Սահակ Զթևյան, նկարազարդված ժողովրդական արտիստ Դարվիշից, Լոս-Անջելոս, 1953:

Նույն օտար երկնակամարի սակ է ծիլ արձակել, հասունացել և համրավ ձևոք բերել երգահան Ալան Հովհաննեսը: Նրա արվեստի զարգացման կորագիծը ավելի բարդ է: Ալանը ծնվել է հայ մշակույթին ծառայողի ընտանիքում: Հայրը՝ Հովհ. Չամաքճյանը գրել ու հրատարակել է «Հայոց պատմություն» գիրքը և կազմել է անգլերեն-հայերեն մի բառարան: Ամերիկայում ծնված որդին շատ բան է զգացել հայ ընտանիքում, բայց մեծացել է որպես ամերիկացի, հետևել ամերիկյան երաժշտությանը, գրել է բազմաթիվ ստեղծագործություններ: Հայկական մեղեդիներն ցնցել է նրան և ստիպել, որ նա հետևի արևելյան երաժշտությանը: Ալանը գրել է նոր ստեղծագործություններ՝ «Անահիտ», «Վահագն»: Սակայն դրանք միայն անունով են հայկական:

Ժամանակակից ֆրանսիական նկարչության խոշորագույն դեմքերից մեկըն է Գառզուն (Գառնիկ Զուլումյան): Խոշոր արվեստագետ է Ակիմ Թամիրովը՝ կինոռեժիսոր-դերասան, որը, սակայն, հեռու է հայկական մշակույթից:

Նույնը կարելի է ասել համաշխարհային կինոարվեստի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Ռուբեն Մամուլյանի մասին: Նա ևս ծնվել է հայ արվեստին ծառայողի ընտանիքում: Նրա մայրը՝ Վերժինե Մամուլյանը, երկար տարիներ ծառայել է հայկական թատրոնին Կովկասում և Ամերիկայում: Մոսկվայում դաստիարակված և ռուսական ռեալիստական թատրոնի ավանդներով զինված Ռ. Մամուլյանը ընկավ արտասահման և իր տաղանդի առաջաստները բացեց օտար ափերում:

Ճանաչված են նաև Մարո և Անահիտ Աճեմյան քույրերը, առաջինը՝ դաշնակահարուհի, երկրորդը՝ ջութակահարուհի, նկարիչներ Ժերանյանը, Գր. Շլիյանը և շատ ուրիշներ:

Այսպիսով, սփյուռքահայ մշակույթի տարբեր ճյուղեր ունեցել են գոյատևման տարբեր հնարավորություններ, ապրել զարգացման տարբեր ուղիներ, որոնք արդյունք են տարբեր քաղաքական ու սոցիալական պայմանների: Եթե գրականությունը և արվեստի որոշ ճյուղեր (թատրոն, երաժշտություն և այլն) զարգանում են տվյալ գաղթօջախի հասարակական-տնտեսական կյանքին համընթաց, նպաստում սփյուռքի գոյատևմանը, ապա որոշ ճյուղեր (նկարչություն, ճարտարապետություն) աստիճանաբար կորցնում են իրենց ազգային դրոշմը, միաձուլվում տիրապետող ժողովրդի արվեստին:

Սակայն, ամբողջությամբ վերցրած, այն, ինչ կատարվում է հայ մշակույթի զարգացման ուղղությամբ, վկայում է սփյուռքահայության կենսունակության, հայրենասիրության, սովետական հայրենիքի նկատմամբ ունեցած անսահման հավատի, նրա հետ վերամիավորվելու վառ հույսերի մասին: